№ 37 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 18 ՓԵՏՐՎԱՐԻ

1910
ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 18 ՓԵՏՐՎԱՐԻ № 37

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 228

ՄՇԱԿ

ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 10 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով):

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ
ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԿԱՍՍԱՆԵՐ

Մայրաքաղաքներում, Պետական Բանկերին, Գանձարաններին, պօստ-հեռագրական հիմնարկութիւններին և մաքսատներին, նոյնպէս և երկաթուղային վարչաններին և բազմաթիւ կայարաններին կից:

ՎԵՐՑՆՈՒՄ ԵՆ ՊԱՀԵՍՏԱԳՈՒՄԱՐ

տոկոսների աճումով—մինչև 1000 րուբ. մի անձի անունով, իսկ մինչև 3000 րուբլի՝ ընկերութիւնների և հիմնարկութիւնների անունով: Խնայողական կասսաները մտցրված գումարները բերում են առեւս 100 րուբլուն 4 րուբ. տարեկան, եթէ ի պահեստ տրված գումարը 100 ր. բարձր չէ, իսկ ընկերութիւնների և հիմնարկութիւնների 1000 րուբլուց աւելի գումարների համար իւրաքանչիւր 100 րուբլուն 2 ր. 40 կ.:

ԳՆՈՒՄ ԵՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ

ի պահեստ դրված գումարների տէրերի համար, ձրիաբար պահում են այդ արժեթղթերը, հետևում են տիրաժներին և ստանում են կուպօններից առաջացած փողերը:

ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
հետևեալ կարգով.

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՀՎԱՆ ԴԷՊՔՈՒՄ:
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԽԱՌՆ, այսինքն՝ թէ մահվան և թէ ծերութեան դէպքերում:
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ՕԺԻՏԻ ԵՒ ՍՏԻՊԵՆԴԻԱՆԵՐԻ:
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ:

Մահվան դէպքում և խառն ապահովագրութիւնները կատարվում են առանց բժշկական վկայութիւնների, ըստ որում՝ ապահովագրվածի մահվան դէպքում, երբ վերջինս տեղի է ունեցել ապահովագրութեան առաջին երեք տարվայ ընթացքում, վերադարձվում է մտցված ամբողջ գումարը (դուրս գալով 5% գործավարութեան համար), չորրորդ տարում տեղի ունենալուց՝ տրվում է ապահովագրված գումարի կէս մասը, հինգերորդ տարում՝ գումարի 3/4 մասը, իսկ հինգ տարին լրանալուց յետոյ մեռնելու դէպքում՝ ամբողջ գումարը տրվում է լրիւ: 3000 րուբլուց բարձր գումարներով ապահովագրվելու դէպքում վերոյիշեալ ժամանակամիջոցները երկարվում են 2 տարով:

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՏԱՐԻՖՆԵՐ

(16,18) (առ.) (II. 18396) 166. 2—2

Այնքան էլ դժուարին չէ զանազանել

լաւ պապիրոսները վատերից, ինչպէս այդ թւում է. խնդրում ենք միայն փորձել «ԵՂԲ. ՍԷՅԼԱՆԵԱՆՆԵՐ» Առևտր. Տան ծխախոտի նոր ֆաբրիկայի պապիրոսները՝

Зефиръ—25 ՀԱՏԸ 15 Կ., 10 ՀԱՏԸ 6 Կ.
ВОСХОДЪ—10 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.
МАРСЪ—20 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.

ՈՐՊԷՍԶԻ ՀԱՄՈԶՎԵԼ, ՈՐ ԱՅԴ ՊԱՊԻՐՈՍՆԵՐԸ ԼԱՒԱԳՈՅՆ ԵՆ ԲՈԼՈՐ ԸՆԴՈՒՆՎԱԾՆԵՐԻՑ:

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ
„ԵՂԲ. ՍԷՅԼԱՆԵԱՆՆԵՐ“

(ե. հ. կ.) (առ.) 155. 25—5

ԵՍ, ԱՆՆԱ ՉԻԼԼԵԱԳ,

աճեցրել եմ իմ անսովոր երկար (185 սանտիմետր երկար.) մազերս—որ յիշեցնում է Լօրելէյի մազերը—շնորհիւ իմ հնարած առանձին պոմադայի 14-ամսեայ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ: Այդ պոմադան ճանաչված է լաւ միջոց մազերը թափվելու դէմ, միևնոյն ժամանակ նպաստում է նրանց աճման և արմատների ամրացման: Տղամարդիկ, շնորհիւ այդ պոմադայի, ունենում են խիտ և ճոխ երկար միրուք, նոյնպէս և (մինչև անգամ կարճ ժամանակեայ գործածութիւնից յետոյ) գլխի մազերի և միրուքի բնական փայլ: Միևնոյն ժամանակ պոմադան պահպանում է մազերը շուտ ճերմակելուց, նոյնիսկ ծերութեան ժամանակ:

Բանկայի գինը
3 եւ 5 րուբլի

Գլխաւոր պահեստը ԴԵՂԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մէջ. Թիֆլիսում, Բագւում և Բաթումում:
(չ. հ.) 85. (առ.) 25—8

Հինգշաբթի, փետրվարի 18-ին Կովկասի Հայ. Գիւղատ. Ընկ. դահլիճում կայանալու է
Թիֆլիսի Հայ Գիւղատնտ. եւ Տնայնգ. Ընկ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Զբաղմունքի առարկաներն են.
1) Զեկուցում վարչութեան, տնայնագործ. սեկցիայի և մեղուաբուծական յանձնաժողովի.
2) Զեմստվօների տնտեսական դերը—զեկուցում Ս. Աթանասեանի.

Սկիզբն է երեկոյեան ժամը 7-ին:
Կարող են ներկայ լինել կողմնակի անձեր:

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.

Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1.
(երեկոյեան ժ. 5—7.

Երևանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.
(ե. հ. կ.) (առ.) 1045. 100—61

ԼԵՕՆ
Գանովսկայա փողոց № 7.
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՄԵԾ
ՊՈՐՏՐԵՏՆԵՐ
Մեծացվում են ամեն տեսակ պատկերներից:
ԳՆԵՐԸ ՇԱՏ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ

Գործը ցուցադրված է Բօրօժնովի մագազինի մօտ, անկիւնում, եւ արուեստանոցում՝ Կավկազսկի Տօվարիշչեստվօյի շարքով, Գանովսկայա փողոց № 7:

Պորտրէտները այնտեղ եւեթ գցվում են շրջանակների մէջ:

Լուսանկարիչներից եւ սիրողներից ընդունվում է մեծ պորտրէտների եւ նէգատիվների բէտուշի գործ:

Նոյն արուեստանոցում տրվում են բէտուշի դասեր երկու սեռի անձանց համար. պայմանների մասին դիմել՝ Тифлисъ, Гановская ул. № 7, Художественное Ателье „ЛЕОНЪ“
Леону Теръ-Григорянцу.

(հ. կ.) (առ.) 206 10—1

Թիֆլիսի Ժողովարան

Ուրբաթ, փետրվարի 19-ին
տեղի կունենայ

→ ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ ←

Կը նուագէ յարանուագների խումբը պ. Գ. Իչինիի ղեկավարութեամբ:
Դիմակների համար տոմսակները վաճառվում են Ժողովարանի շվէյցարի մօտ:
Հիւրերը թոյլատրվում են համաձայն ընդհանուր հիմունքների՝ վճարելով—տղամարդիկ 1 րուբ., իսկ կանայք 50 կոպ.:
Հագուստը.—զինւորականները սովորական հագուստով, քաղաքացիները սև սիւրտուկով կամ ազգային տարազով:
(հ. ու.) (առ.) 205. 2--1

ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ

«Մշակի» մէջ յայտնված էր, որ այսօր, հինգշաբթի, փետրվարի 18-ին, Թիֆլիսի Հայ Գիւղատնտ. և Տնայնագործական Ընկերութեան նիստում պէտք է խօսվի զեմստվային հիմնարկութիւնների մասին և ի միջի այլոց պէտք է քննութեան ենթարկվի ազգութիւնների մասնակցութեան հարցը զեմստվային ինքնավարութեան մէջ:

Այն խորհրդակցութիւնները, որոնք տեղի ունեցան մեր երկրում, շօշափեցին վերջին խնդիրը և մեծ մասամբ աւելորդ համարեցին յատուկ յօդուածներ մշակելն ազգութիւնների մասնակցութեան վերաբերութեամբ:

Մեր երկրի նման միջավայրում, ուր կան բազմաթիւ ազգութիւններ, անշուշտ, զեմստվային ընտրութիւնների և վարչական ու գործավարական մարմիններ կազմելու ժամանակ հանդէս են գալու նաև ազգութիւնների ներկայացուցչութեան հարցեր: Դա բնական է և բոլորովին հասկանալի:

Բայց պէ՞տք է արդեօք ազգութիւնների հարցին առանձնակի տեղ տալ և նրան օրէնսդրական ձևակերպութիւնների մէջ մտցնել, թէ՞ նրան թողնել իրական կեանքի և հասարակական կարծիքի բարեհայեցողութեան—ահա ասպարէզի վրա դրված հարցը:

Շատ շարժառիթներ կան ներկայումս թելադրող, որ ազգութիւնների հարցը օրէնսդրական սահմանաւորումների առարկայ չը դառնայ:

Թէ այն հանգամանքը, որ զեմստվային հիմնարկութիւնները գործ ունեն գլխաւորապէս տնտեսական-հասարակական գործառնութիւնների հետ, թէ այն, որ տեղական ինքնավարութիւնը իր մանր միութիւններով ապահովում է տեղական տարրերի շահերը, թէ այն, որ կեանքի մարդիկ իրականութեան մէջ առանց մեծ դժուարութիւնների լուծում են այդպիսի խնդիրներ, և թէ վերջապէս այն, որ ազդեցիկ շրջանների ներկայ տրամադրութիւնները բաւականաչափ չեն ապահովում խնդրի անաչառ և նպատակայարմար որոշումը, թելադրում են չը յարուցանել առանձին հարց ազգայնական մասնակցութիւնների վերաբերութեամբ:

Սակայն խնդիրը ըստ էութեան և գործադրութեան ունի կարևոր կողմեր, որոնց վերաբերութեամբ ցանկալի է ունենալ բազմակողմանի ուսումնասիրութիւն և պատճառաբանված կարծիքներ:

Ուստի նպատակայարմար կը լինէր, որ այսօրվայ նիստում պարզվէր միայն շօշափված խնդրի ընդհանուր էութիւնը, իսկ միևնոյն ժամանակ մշակվէին հարցակէտեր, որոնց վերաբերութեամբ ձեռնհաս անձեր ոչ միայն Թիֆլիսում, այլ և գաւառներում կարող լինէին ներկայացնել իրանց թեր ու դէմ կարծիքները:

Ապագայում այդ կարծիքները կը ծառայէին իբրև շահեկան նիւթ լուսաբանելու յարուցված խնդիրը բազմակողմանի կերպով և ապա այս ու այն արտայայտութիւնը տալու գիտակից հասարակական կարծիքին, որպէսզի տեղական կենսական շահերը վտանգված չը լինեն էական կերպով և զեմստվային ինքնավարութեան գործօն մարմինները հնարաւորութիւն ունենային իրանց կոչման բարձրութեան վրա մնալով իրագործելու հասարակական տնտեսական իրանց պարտաւորութիւնները:

Ա. Քալանթար

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

Լոնդոն, 16 փետրվարի

Համայնքների պալատ: Նիստերի դահլիճը և վերնասրահները լի են:

Ասկվիտը յայտնեց, որ բիւջէից յետոյ կը ներկայացնէ մի բանաձև, որով յայտնվում է անհրաժեշտութիւն՝ մեկուսացնելու լորդերի պալատը ֆինանսական հարցերի լուծումից և առաջարկվում է համայնքների պալատին յայտնել՝ թէ լորդերի veto-ն պէտք է սահմանափակվի, որպէսզի ապահովվի համայնքների պալատի գերիշխանութիւնը: Ասկվիտը յայտնում է, որ մտադիր է գալիք տարի վերակազմել լորդերի պալատը դեմօկրատական հիման վրա. կը միանա՞յ, արդեօք, լորդերի պալատը այդ բանաձևին թէ՞ ոչ,—կառավարութիւնը յամենայն դէպս համայնքների պալատի ազատագրվելը լորդերի veto ի գործողութիւններից համարում է իր գլխաւորագոյն պարտականութիւնը: Կառավարութիւնը բանաձևը գործադրելու համար հանդէս կը գայ իր բովանդակ իշխանութեամբ (ծափահարութիւն մեծամասնութեան աթոռներում):

Լիբէրալ լրագիրները գոհ են Ասկվիտի յայտարարութիւնից. պահպանողական մամուլը կշտամբում է Ասկվիտին, թէ նա բոլորովին անտես է անում երկրի ֆինանսական շահերը և անպատշաճ կերպով հնազանդվում է արմատականներին:

Համայնքների պալատում Բալֆուրը յայտնեց, որ պարլամենտական տեսակէտից կառավարութեան գործելակերպը կարող է փորձնական լինել, որովհետև կարող է գոհացնել բոլոր կօալիցիօն խմբակներին, սակայն այդ գործելակերպը անհետևողական է պետական տեսակէտից:

Բալֆուրից յետոյ հանդէս եկան Րէդմօնդը, Դայլ-գիէլը, Չեմբերլէնը և Լլօյդ Ջօրջը: Վերջինս, պատասխանելով Չեմբերլէնի հարցին, ասաց, որ նրա կարծիքով Ասկվիտը բաւականին որոշակի բացատրեց, թէ չը պէտք է բիւջէն ընդունել լորդերի պալատի veto-ի իրաւունքը լուծելուց առաջ:

Դրանից յետոյ միաձայն ընդունվեց Ասկվիտի առաջարկութիւնը՝ նուիրել բոլոր նիստերը մինչև մարտի 11-ը բացառապէս բիւջէին և ֆինանսական հարցերին, յետոյ մարտի 11-ին նիստերը ընդհատել: Ընդունվեց մի բանաձև, որով կառավարութիւնը լիազօրվում է փոխառութիւն կնքել պարտքերը հատուցանելու, 1909 թւի զինւորական փոխառութեան մնացորդները հանգցնելու համար:

Իրլանդական կուսակցութիւնը որոշեց կառավարութեան վերաբերութեամբ չէզոք դիրք բռնել: Ընդհանուրի կարծիքով ճգնաժամը մի քանի շաբաթ վերացված է: (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 16 փետրվարի

Սերբիական Թագաւոր Պետրը սպասվում է մեծ պասի երկրորդ շաբաթին: Նորին մեծութեան բացի շքախմբից հաւանօրէն կուղեկցեն մինիստր-նախագահ Պաշիչը և արտաքին գործերի մինիստր Միլօվանօվիչը:

Կայսրուհի Մարիա Ֆէօդօրօվնան իր սեփական միջոցներից 1000 ր. նուիրեց Պարիզի հեղեղից վնասվածների օգտին:

Մեծ Իշխանուհի Մարիա Պավլօվնայի տուած ճաշին ներկայ էին բօլգարական Թագաւորը և Թագուհին, Մեծ Իշխանները և Մեծ Իշխանուհիները, արտաքին գործերի մինիստրը:

Ժամը 3-ին բօլգարական Թագաւորը և Թագուհին գնացին Ցարսկօե-Սէլօ և Ալէքսանդրեան պալատում ընդունվեցին Կայսրից և Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնայից և հիւրասիրվեցին թէյով:

Երէկ բուխարական էմիրը բօլգարական Թագաւորին և Թագուհուն այցելելիս մատուցեց Նորին մեծութեանը բուխարական Իսկենդէր-Իսալիս բարձր շքանշանը: Այսօր գեներալ Մարկօվը բօլգարական Թագաւորի անունից էմիրին նուիրեց բօլգարական ս. Ալէքսանդրի գոհարազարդ շքանշանը: (Հ. Գ.)

Բագու, 16 փետրվարի

Աւազակները յարձակվեցին Լէնքօրանի գաւառի Իրգալիլենու գիւղի վրա, սպանեցին մի շինականի, մահացու վիրաւորեցին երեքին, յափշտակեցին բազմաթիւ իրեր և անյայտացան:

Մայիլովի ձկան պրոմիսլայում, Ջէվադի գաւառում, ձերբակալվել են դրամանենգներ: Գտնվել են կեղծ դրամներ և ձուլման գործիքներ: (Հ. Գ.)

Սէվաստոպօլ, 16 փետրվարի

Քաղաքային ինքնավարութիւնը բէլգիացի դրամատէրերի հետ պայմանագիր կապեց կէս միլիօն փոխառութեան համար: (Հ. Գ.)

Հէլսինգֆօրս, 16 փետրվարի

Սէյմի պատգամաւորները այսօր ժողովվեցին լիազօրութիւնները ստուգելու համար: (Հ. Գ.)

Պարիզ, 16 փետրվարի

Պատգամաւորների պալատը ընդունեց 154 միլիօնի կարճ-ժամանակեայ օբլիգացիաներ բաց թողնելու օրինագիծը: (Հ. Գ.)

Պարիզ, 16 փետրվարի

«Մատէն» լրագրի հաղորդած տեղեկութիւնների լոյսը դրդեց կառավարութեանը ծովային կոնտրոլի պաշտօնեաների օգնութեամբ քննել բոլոր նաւահանգիստները և ծովային հաստատութիւնները: (Հ. Գ.)

Բեռլին, 16 փետրվարի

Րէյխստագի նախագահ միաձայն ընտրվեց պահպանողական կոմս Շվէրին-Լովիցը: (Հ. Գ.)

Անտիվարի, 16 փետրվարի

Առաւօտեան եկաւ աւստրիական նաւատորմը փոխ-ծովակալ Գաուսի հրամանատարութեամբ: Ողջունելու համար եկան աւստրո-ունգարական դեսպանը, իշխան Նիկօլայի ներկայացուցիչը, զինւորական և քաղաքացիական պաշտօնեաները: Ափը ոտք դնելիս փոխ-ծովակալը և նաւատորմի օֆիցերները ընդունվեցին ազգաբնակութիւնից «ժիվիօ» բացագանչութիւններով: Նաւահանգիստը զարդարված է տօնական կերպով: Երեկոյեան հրավառված էր: Կէսօրին փոխ-ծովակալը, օֆիցերները և դեսպանը մեկնեցին Ցետինէ: (Հ. Գ.)

«Ֆօսիշէ-Ցայտունգին» հեռագրում են Աթէնքից. «Համալսարանում յուզմունքներ են և ընդհարումներ ուսանողների մէջ: Միսօլինգիում բռնկվել են անկարգութիւններ:

«Վէնիզէլոսը մեկնեց Կրետէ»: (Հ. Գ.)

Բոստոն, 16 փետրվարի

«Լլօյդ Սաէմցել-Կոմպանի» նաւաշի-

Նարանում հրդեհ ծագեց, որ պատճառեց երեք միլիոն դոլլար վնաս։ (Հ. Գ.)

—

Պուանդապիտր (Գվադելուպա), 16 փետր.

Երեք գործարաններում աշխատանքները վերսկսվեցին։ Քարուքանդ են՝ եղած երկու տնկարաններ։ Բնակիչների մէջ կան ծանր վիրաւորվածներ։

(Հ. Գ.)

—

Պ ե տ ե ր բ ու ր գ.—Լուրերի համաձայն, ներքին գործերի մինիստրութեան նախահաշիւը Պետական Դումայում քննելու ժամանակ հանդէս է գալու ինքը Ստոլիպինը և տեղեկութիւններ է հաղորդելու բացարիկ և զինուորական դրութիւնները վերացնելու մասին։ («Б.»)

ՁԻՒՆ ԵՒ ՀԵՂԵՂ

—

Նիւ-Եօրկ, 16 փետրվարի

Բուրկում և Իդախոում փլչում են ձիւնակոյտեր։ Բնակիչները բոլորովին հեռացան իրանց կացարաններից։

(Հ. Գ.)

—

Ամստերդամ, 16 փետրվարի

Մարսի ափերին և մօտիկ տեղերին սպառնում է հեղեղը։ Մաստրիխտին մօտիկ գործարանները ջրի տակն են. բանւորները մնացել են առանց աշխատանքի։ Մաստրիխ քաղաքում հարիւրաւոր տներ ջրասուզված են։

(Հ. Գ.)

—

Նիւ-Եօրկ, 16 փետրվարի

Ձիւնակոյտը ծածկեց Բէգ գիւղը, Վալլասի մօտերը, որի մէջ ապրում են 300 լեռնային բանւորներ։ Ազատարար աշխատանքները դժուարանում են ձիւնային փոթորկի պատճառով։ (Հ. Գ.)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Սալոնիկ, 16 փետրվարի

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը առաջարկեց Ուսկիւբի վալիին Վերին Ալբանիայի դպրոցներում գործ չածել լատինական դասեր։ Այս կարգադրութեանը չը հնազանդվող դպրոցը փակվում է. լատինական դասերի կողմնակից ուսուցիչները և պաշտօնեաները արձակվում են. այն ալբանացի պարագլուխները, որոնք ստորագրել են յօգուտ լատինական դասերի ուղարկված հեռագրի տակ, ենթարկվում են հալածանքի։

Կառավարական ճնշող միջոցները յարուցում են ալբանացիների դժգոհութիւնը։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 16 փետրվարի

Արտաքին գործերի մինիստրութեան և բուլգարական միսսիայի մէջ Գործակալութեանս Թղթակցի ժողոված տեղեկութիւնների համաձայն, թիւրք և բուլգար դիպլոմատների յարաբերութիւնները միանգամայն կոռեկտ են. երկու կողմերն էլ անկեղծօրէն ձգտում են վերացնելու այն թիւրիմացութիւնները, որոնք ծագում են սահմանային ուղիղ և ճիշդ գծի բացակայութիւնից։

Բուլգարական Թագաւորին Պետերբուրգում ցոյց տրված ընդունելութեան մասին տեղիս լրագրների յայտնած կարծիքները ոտքի հանեցին Ռուսաստանին թշնամի տարրերին։ Պարլամենտական գործիչների հետ անձամբ խօսակցութիւններ ունենալով Գործակալութեան Թղթակիցը պարզեց, որ այստեղ երկիւղ են կրում, թէ մի գուցէ Պետերբուրգի դէպքերը գրգռեն բուլգարական շովինիզմը։ Նոյն բանից երկիւղ են կրում նաև Բ. Դրան մէջ։ Յիշեալ երկիւղները նիւթ են ստանում Սօֆիայի ազգաբնակութեան յուզմունքից, սահմանագլխային նոր ընդհարման և թիւրքաց ու բուլգար զօրամասերի այդ ընդհարմանը մասնակցելու տեղեկութիւններից։ Թիւրքաց արժեթղթերը ընկել են, թէև լուրջ պատճառ թիւրիմացութեան համար չը կայ, որովհետև Մակեդոնիայում ամեն ինչ հանգիստ է։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Թէհրան, 16 փետրվարի

Սիփէհդարը և Սարդար-Ասադը փոխառութեան պատճառով պնդում են հրաժարականի վրա, սակայն մէջլիսը և խնամակալը չեն ընդունում։ Ոստիկանապետ Եփրեմի կինը մայրաքաղաքի մէդրէսէներում գումարում է կանանց միտինգներ բողոքելու արտաքին փոխառութեան դէմ։ (Հ. Գ.)

—

Թ է հ ր ա ն.—Սպահանից, Թաւրիզից, Ղազվինից և այլ քաղաքներից հեռագիրներ են ստացվում՝ թէ տեղի են ունենում բողոքի միտինգներ արտաքին փոխառութեան դէմ։ «Իրան-Նօվ» լրագիրը դիմում է ժողովրդին և կոչ ուղղում՝ գրաւ դնել կանանց և երեխաներին և զոհել երկրի կարիքների համար, պահանջելով կառավարութիւնից դեմօնստրատիվ կերպով՝ մերժել ռուսների և անգլիացիների առաջարկութիւնները։

Արտաքին գործերի մինիստրը երէկ ռուս դեսպանին վերստին բողոքեց, որ հիւրընկալվում է Րահիմ խանը, և պնդեց, որ անպայման նա յանձնվի պարսից իշխանութեան ձեռքը։

Պարսից սահմանագլխային քաղաքներում գտնվող թիւրքաց զօրքերը հեռացան։ («Б.»)

ՕՍՄ. ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԱՅՑԸ ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

—

Կ. Պոլսի մեր թղթակիցներից Շահէնն իր վերջին թղթակցութեան մէջ, որ տպվեց «Մշակի» երէկվայ համարում (№ 36), հաղորդել էր, որ Դուրեան պատրիարքին փոխ այցելութիւն են արել ինչպէս գեներալիսիմուս Մահմուդ Շէվքէթ փաշան, այնպէս և ֆինանսների, ներքին ու արդարադատութեան մինիստրները։

Ի լրումն այդ թղթակցութեան՝ ստորև առաջ ենք բերում այդ այցի մանրամասնութիւնը՝ քաղելով «Բիւզանդիոնից»։

Մահմուդ Շէվքէթ փաշա երէկ (փետր. 5-ին) երեկոյ իր թիկնապահին հետ ժամը $9^1/_2$-ին փոխադարձ այցելութեան եկաւ ս. պատրիարքին և պաշտօնէից կողմէ դռնէն ընդունուելով դահլիճին դռնէն դիմաւորուեցաւ ս. պատրիարքէն։ Մինիստրին շնորհակալութիւն յայտնեց ս. պատրիարքը, որ իր այս շնորհալի այցելութեամբը կը պատուէ զինքը։ Շէվքէթ փաշա տեղեկութիւն հարցնելով օրուան դէպքերուն վրայ. ս. պատրիարքը հետևեալ հեռագիրը ցոյց տուաւ Անթաքիոյ առաջնորդէն հասած. «Անթաքիոյ անլուր աղէտին սկզբնապատճառ եղող չարագործները քաղաքին մէջ արձակ համարձակ կը պտտին և այս պատճառաւ անօթի և կարօտ վիճակի մէջ մնացած խեղճ և արկածեալ ժողովուրդն անվտանգութեան մէջ մնացած է։ Կը խնդրենք, որ այդ չարագործները հեռացուին»։ Այս հեռագրին վրայ խնդրեց ս. պատրիարք հայրը, որ Ադանայի այն պատերազմական ատեանը, որ քանի մը շաբաթէ ի վեր կը զբաղի Ադանայի դէպքերին վերաքննութեամբ, այս խնդիրն ալ նկատողութեան առնէ։ Ն. սրբազնութիւնն աւելցուց, որ, երբ այս չարագործներն ազատ կը պտտին, անդին՝ Տիգրան Թագէոսեան անուն ազգային մը անձնապաշտպանութեան համար բանտարկուած է և ուրիշ հայեր ալ կը մնան Բօզանթի և Ադանայի բանտերուն մէջ։ Մահմուդ Շէվքէթ փաշա ըսաւ, թէ Անթաքիոյ չարագործներէն մէկուն համար, որուն եղբայրը երեսփոխան է, հեռագրած էին իրեն, թէ ազատ կը պտտի, և խոստացաւ հեռագրել Ադանայի զինուորական հրամանատարին, տեղեկութիւն ուզել այս մասին և պէտք եղածը տնօրինել։ Ս. պատրիարք հայրը կրկին խնդրեց, որ Զէյթունի Վաղըշակ վարդ. իր տեղը վերադարձուի, որովհետև տեղւոյն հոգևոր պետը Զէյթունի աղքատ ժողովրդեան հոգևոր մխիթարութիւնն է, և աւելցուց, թէ ոչ տեղւոյն առաջնորդն և ոչ ալ Զէյթունի ժողովուրդը վերջին դէպքերուն մէջ քննադատելի արարքի մէջ չեն գտնուած, և ցաւալի է որ, ըսաւ, տեղական վիճակին անգիտութեան հետամուտ այսպիսի եկեղեցական մը իբրև խռովարար ամբաստանուի և բանտարկուի։ Շէվքէթ փաշա հաւաստեց, որ անցեալ օր հեռագրած է Ադանայի զինուորական հրամանատարին և բացատրութիւն պահանջած է և երբ պատասխան ստանայ, պէտք եղածը պիտի գործադրէ։ Ս. պատրիարք հայրն ակնարկելով Ադանայի դէպքերին՝ ըսաւ. «Օրէ օր լուրեր կը հասնին, որ շատ հայեր առանց դատավարութեան զրպարտութեամբ կը դատապարտուին. կը խնդրեմ, որ քննութիւն մը ըլլայ ասոնց մասին, և այն հայերը, որ դէպքի միջոցին օտար երկիրներ ապաստանած են, երբ վերադառնան՝ իբր ամբաստանեալ չձերբակալուին»։

Այս միջոցին հասաւ ներքին գործոց մինիստր Թալէաթ բէյ, որ պատուով ընդունուելով, ս. պատրիարքը տեղեկութիւն ուզեց Մշոյ վիճակին վրայ։ Մինիստրը պատասխանեց, թէ նոր հեռագիր մը ստացած է կառավարիչէն, որ կըսէ թէ անդորրութիւն կայ ամեն կողմ. սակայն հեռագրուած է իրեն, որ ամեն ուշադրութիւն ընծայուի, ուստի խնդրեց, որ ս. պատրիարքն ալ իր կողմէ շրջաբերական ղրկէ և ժողովուրդն զգուշացնէ չափազանցութեան չդիմելու։ Ս. պատրիարքն ըսաւ, որ առաջնորդներն իրենց պարտքը կը կատարեն արդէն և ժողովուրդն ալ կը զգուշանայ չափազանցութիւններէ։ Այս միջոցին մեկնեցաւ Մահմուդ Շէվքէթ փաշա և ս. պատրիարքը հետևեցաւ մինչև դուռը։

Թալէաթ բէյի հետ տեսակցութիւնը շարունակուելով, խօսքը դարձաւ մասնաւորապէս հայաբնակ գաւառներու հողային խնդրոյն վրայ, և Թալէաթ բէյ ըսաւ, որ այս խնդիրը կարգադրութեան մը պիտի կենայ յանգիլ և թէ առաջարկած է մինիստրներու խորհուրդին, որ ինչպէս Եւրոպայի մէջ կան՝ շրջիկ դատարաններ հաստատուին այս հողային դատերուն համար։ Այս դատարանները նախնական վճիռը մը պիտի տան, բայց կարելի պիտի ըլլայ վերաքննել։ Ս. պատրիարքը շնորհակալութիւն յայտնեց Երուսաղէմի վանքէն երեք վարդապետներուն վտարման համար կառավարութեան ցոյց տուած աջակցութեան մասին, և Թալէաթ բէյ ըսաւ, որ պատրիարք և վարչութիւն երբ որոշում մը տան, իրենք պարտաւոր կը զգան զիրենք գործադրել։ Կիլիկիոյ որբերուն և այրիներուն վրայ խօսք դարձած պահուն Թալէաթ բէյ ըսաւ, որ մինիստրներու խորհուրդի մէջ նկատողութեան առնուած է այս խնդիրը և յառաջիկայ մարտէն սկսեալ պէտք եղած գումարը յատկացուելով՝ անոնց վիճակը պիտի բարելաւուի։ Թալէաթ բէյ մեկնած պահուն խոստացաւ յաճախակի այցելութիւններով խորհրդակցիլ կարևոր խնդիրներու վրայ, որուն համար ս. պատրիարքը շնորհակալութիւն յայտնեց և մինչև դուռն հետևեցաւ մինիստրին։

Այսօր (փետր. 6-ին) ս. պատրիարքին այցելութեան կուգայ դատական մինիստր Նէջմէդդին մօլլա։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Ալեքսանդրօպօլ, 10 փետրվարի

Ահա վեց ամսից աւել է, ինչ Ալեքսանդրօպօլում բուն է դրել շանտաժիստների մի խումբ, որը մահվան սպառնալիք տալով՝ փող է պահանջում քաղաքացիներից։

Այդ խմբակն ունեցել է մի քանի աջող որսեր և անպատիժ մնացել՝ ծանրանալով առանց այն էլ տնտեսապէս քայքայված ժողովրդի շլինքին։ Իսկ ինչ են մտածում ալեքսանդրօպօլցիք, ինչ են մտածում մեր քաղաքի ձայնաւորները և մեր գաւառական թերթերը չարիքի դէմն առնելու համար։ Աչինչ և ոչինչ։ Գաւառական մամուլի վրա մեծ պարտականութիւն կայ չարիքի ժամանակ յորդորելու ժողովրդին, որ միահամուռ ուժերով կռիւ մղէ՝ վերջ դնելու չարիքին։ Թուցէ ալեքսանդրօպօլցիք յոյսները դրել են ոստիկանութեան վրա, բայց վերջին տարիների դառն փորձերը ցոյց են տուել, որ ոստիկանութիւնը, առանց ժողովրդի աջակցութեան, անզօր է նոյնանման չարիքների առաջն առնել։ Շատ չէ անցել այն օրից, երբ քաղաքիս փոխադարձ վարկի ընկերութեան դրամարկղը կողոպտեցին։ Ժողովուրդն իսկոյն և եթ ոտքի կանգնեց, և ոստիկանութեան աջակցութեամբ կարելի եղաւ մի ժամում բոլոր չարագործներին բռնել և տալ իշխանութեան ձեռքը։ Միթէ սա պարզ ապացոյց չէ, որ եթէ ժողովուրդը ոտքի կանգնէ, վերջ կը տայ շանտաժիս։

Շանտաժիստների սանձարձակութիւնն այնտեղ է հասել, որ ոստիկաններին էլ են անօնիմ նամակ գրում, որ անշարժ մնան, եթէ ոչ՝ թէ իրանց կը սպանեն և թէ գաւառապետին։ Խիստ աստիճանի դատապարտելի է մեր քաղաքագլխի բռնած դիրքը։ Շատ-շատերը գիտեն, թէ ովքեր են, այդ շանտաժիստները, բայց թագցնում են որով աւելի ևս խրախուսում բաղդախնդիրներին։ Միթէ մեր ժողովուրդը դեռ չէ եկել ինքնագիտակցութեան։ Ցաւալի է որքան մենք մեր ծոցում սնուցենք մարդ-գազաններին։ Ժամանակ չէ՞, որ Ալեքսանդրօպօլի ժողովուրդը ոտքի կանգնի և միացած ուժերով արմատախիլ անէ ժողովրդական այդ մեծ չարիքը։ Ալեքսանդրօպօլցի

—

Մ ե ծ - Ղ ա ր ա ք ի լ ի ս ա, 7 փետրվարի

Անցեալ տարի ամառը, տեղիս հասարակութիւնը, հոգ. կառավարութեան կարգադրութեամբ, երեք երկարատև ժողովներից յետոյ, ուր մանրամասն քննվեցին հին հոգաբարձութեան հաշիւները և հրապարակ հանվեցին մի շարք դրամական «թիւրիմացութիւններ», ձեռնարկեց նոր ընտրութեան։

Երրորդ ժողովը համարեա միաձայն ընտրեց հոգաբարձ. նոր կազմ, որի վրա պարտականութիւն դրեց ստանալ բոլոր հաշիւները։

Ծխականների մի մասը, հէնց նոյն օրը, հեռագրով բողոքեց հոգ. կառավարութեանը՝ նոր ընտրութեան դէմ։ Բայց հոգ. կառավարութիւնը, աչքի առաջ ունենալով ծխ. ժողովի արձանագրութիւնը և ծխականների օրինական թիւը, հաստատեց հոգաբարձ. նոր կազմը՝ անհետևանք թողնելով բողոքող ծխականների հեռագիրը։

Բողոքողները դրանով չը բաւականացան։ Շուտով մի խնդրագիր ներկայացրին Վեհ. Կաթողիկոսին, անգամ մեղադրելով թէ հոգ. կառավարութեանը, թէ տեղիս գործակալին։

Վեհափառը բարեհաճեց հրամայել հոգ. կառավարութեանը՝ քննութեան ենթարկել ծխականների բողոքը։ Եւ յունվարի 31-ին ծխ. դպրոցի դահլիճում Ալեքսանդրօպօլի հոգ. կառավարութիւնից ուղարկված Խաչվանքեան քահանայի հրաւէրով կայացաւ ծխ. բազմամարդ ժողով, քննելու վերոյիշեալ խնդիրը։ Ներկայ էին բողոքող ծխականները։

Քննութիւնից պարզվեց, որ նոր հոգաբարձութեան ընտրութիւնը կատարվել է օրինական հիմունքներով, գործակալը ոչ մի անօրինական բան չէ արել, դպրոցի ուսումնական կեանքը նորմալ շաւղով է ընթանում և բողոքող ծխականներն ի զուր աղմուկ են բարձրացնում։

Բողոքողները երբ տեսան, որ քննութեան եզրակացութիւնն ի վնաս իրանց պիտի լինի, ժողովը խանգարելու նպատակով բարձրացրին անհարկի աղմուկ և այդպիսով հնարաւորութիւն չը տուին քննիչին ժողովի արձանագրութիւնը կազմելու։ Եւ ժողովն անհետևանք ցրվեց։

Բայց և այնպէս, չը նայած հասարակութեան մի մասի յարուցած արգելքներին, նոր հոգաբարձութիւնը լաւ հասկանալով իր պարտականութիւնը՝ մեծ եռանդով տանում է դպրոցի գործերը։ Հոգաբարձ. կազմի մէջ նկատվում է համերաշխութիւն և աշխատանքի բաժանում, որը դժբաղդաբար հին կազմի մէջ գոյութիւն չունէր։ Ուսուցիչներն ստանում են իրանց ռոճիկները կանոնաւոր կերպով։ Մ. Ղազարեանց

—

Մ օ զ դ օ կ, 1 փետրվարի

Տեղումս ամեն մի ձեռնարկութիւն, որը փոքր ի շատէ հասարակական բնոյթ է կրում, միշտ կաղում է, որովհետև իւրաքանչիւր անհատ իր անձնական շահից դուրս ոչինչ տեսնել չէ ուզում։ Չը նայելով տեղումս կայ սիրողների պատկառելի խումբ, նոյնպէս և գաւառական պահանջներին համապատասխանող բեմ, ծխ. դպրոցի շէնքում, իր ընդարձակ դահլիճով, որտեղ տեղաւորվում են մօտ 300 հոգի, բայց հայ հասարակութիւնը ամիսներով ներկայացումներ երես չէ տեսնում, իսկ հանրամատչելի ներկայացումներ չունենալը դասի համար չէ եղել և չէ էլ լինում, որտեղ համարեա թէ օտարացած, հայերէն լեզուն մոռացութեան տուած հայերը հայ բեմից լսէին մայրենի խօսքը։

Տեղական եկեղեցիները, ծխ. ժողովի մի որոշումով, յատկացրել են երգեցիկ քառաձայն երկսեռ խմբին տարեկան 25-ական (ընդամենը 75) ր. հոգալու համար խմբի աղքատ երգիչ-երգչուհիների անհրաժեշտ կարիքները։ Այդ գումարը մինչև այժմ տրվելիս է եղել խմբապետներին, որոնք ըստ իրանց հայեցողութեան և հոգաբարձութեան տուած ցուցումների գործադրելիս են եղել։ Այս տարի խմբապետ-ուսուցիչ Յովհաննիսեանն այդ գումարի կարգադրութիւնը յանձնել էր ամբողջ խմբին։ Խմբի ազդեցիկ անդամները, միանգամայն մոռանալով ծխ. ժողովի որոշումը, մինչև անգամ աչքաթող անելով խմբի չունևոր անդամների կարիքները, որոշում են 75 ր. բաժանել անխտիր բոլորի մէջ։ Այդ որոշման հետևանքը եղաւ այն, որ փող ստացան այնպիսիները, որոնք կարօտ չէին հասարակութեան տուած կոպէկներին, իսկ չունևորները զրկվեցին կանոնաւոր նպաստ ստանալուց։ Գ. Աբրահամեան

—

Ն ա խ ի ջ և ա ն գ. (Կարսի շրջ.), 2 փետր.

Բնիկ մեր գիւղացի Զաքար Թորոսեանը, որ սրանից 8—9 ամիս առաջ իր զանազան աւազակութիւնների պատճառով փախել էր Թիւրքիա, մօտերս վերադարձել էր Նախիջևան և յունվարի վերջերին բարձրացել իր վաղեմի հակառակորդ Ս. Քոչարեանի տան մօտիկ մի երդիկի վրա և հայհոյել նրանց։ Այդ տեսնելով՝ Քոչարեանի եղբօր որդին հրացանից կրակել է Թորոսեանի վրա, և սա փախչելով իրան գցել է մի դրացու տուն։ Քոչարեանները իրանց ազգականներով շրջապատել են այդ տունը, որպէսզի ձերբակալեն իրանց շարունակ վնասող աւազակին, որին ռուս կառավարութիւնը վաղուց ի վեր փնտռում էր ձեռք բերելու։

Այս միջոցին Ս. Քոչարեանը գնաց գիւղապետ Ա. Վարդանեանին յայտնեց եղելութեան մասին։ Գիւղապետը եկաւ այն տան առաջ, ուր պատսպարվել էր աւազակը։ Քոչարեանը ապա գնաց Տիկոռ, որպէսզի աւազակին ձերբակալել տալու համար գաւառապետին բերի, բայց մինչ այդ՝ գիւղապետը արձակեց աւազակին իր պատսպարանից, և նա փախաւ։

Գաւառապետի օգնականը երբ եկաւ և հանգամանօրէն իմացաւ գործի եղելութիւնը, անմիջապէս ձերբակալեց գիւղապետին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՈԼՍՈՅ ԿԵԱՆՔԷՆ

—

Կ. Պոլիս, 5 փետրվար

Գաւառներէն հասած գուժկան արիւն ու սև լուրերը դարձեալ կը սահմռկէ զմեզ։

Սակայն հոս ալ երջանիկ խաղաղութիւնը մակերեսային է։

Անգամ մը ևս հին արիւնկզակ հրէշը կը փորձէ արիւնի մէջ լողալ։ Ամերիկայի թերթերը կըսէին Համիդի համար թէ՝ օձը բռնեցին, բայց չսպաննեցին։ Աննշան խօսք մը չէր այդ։

Կասկածներու, ապագայ սոսկումի շտեմարանը Համիդի մէջ փնտռելու ենք։ Եւ սակայն միամիտ լրագրութիւնը կը հաւատայ, որ կալանաւորեալը, Ալաթինի հրէշ սուլթանը, իբր թէ չդադար մահափորձեր կընէ. խենթութեան նշաններ տալ՝ համակրութիւն ու գթութիւն վաստակելու փորձեր են. վասն զի պէտք չէ մոռնալ, որ թիւրքին կրօնական ըմբռնումին համաձայն՝ խենթը սուրբ մըն է ու յարգանքի արժանի։

Համիդ ինքզինքը խենթ ձևացնելով այդ կարեկցութեան կուզէ արժանի ընել ինքզինքը. հայ լրագիրներ միամտութեամբ ըէկլամ կընեն Համիդին...

*

Սահմանադրութենէն վերջը բազմապատկած կը տեսնեմ հարցերը։ Ի նկատի առնելու է, որ Համիդին հետ իր ամբողջ կամարիլլան ազատ արտասահմանին մէջ շունչ առաւ։ Ու գիտենք, որ Իզզէթները ու Սելիմները անոնց վրէժխնդրութեամբ կապրին։ Թիւրքիայի վտանգը մեծ է, վասն զի առաջ իր թշնամին միայն Համիդին բռնակալութիւնն էր, իսկ հիմա ամբողջ համիդական կամարիլլան է, որ ճակատամարտ կը մղէ Երիտասարդ Թիւրքերու դէմ։ Գաւառներու ու Պոլսոյ և ամբողջ Թիւրք հպատակներու մէջ խմորուած ըէակցիոնական ցոյցերը վերագրելու է այդ կամարիլլային։

Եւրոպայի մամուլը հիացումով դրուատեց՝ առանց արիւնի ձեռք բերուած սահմանադրութիւնը։ Վախճանը ի նկատի առնուած չէր։ Ֆրանսական յեղափոխութիւնը արիւնով յաղթանակեց։ Եթէ թիւրք սահմանադրութիւնը հին ըէժիմի կատարեալ մաքրագործումովը ձեռք բերուած ըլլար, այսօր ըէակցիոնի անհանգստութիւնը չէր ջլատեր Երիտասարդ-Թիւրքիային բազուկները։ Հին ըէժիմը իր արիւնով պիտի մաքրէր Թիւրքիան։ Սահմանադրութիւնը վտանգի մէջ է, վասն զի իր թշնամիները ազատ ու անպատիժ մնացին։

*

Թիւրքիան քանի որ իր հաւասարակշռութիւնը գտած չէ, քանի որ հայրենասիրութիւնը գոյութիւն չունի այս թշուառ երկրին մէջ, ուր հակասահմանադրական հզօր ձեռքը Թիւրքիոյ շահերուն գերեզմանը փորելու կը պարապի, ապա ըէակցիոնի ուրուականը հորիզոնէն չի հեռանար։ Չարամտութիւն կամ միամտութիւն պիտի ըլլայ չտեսնել կամ ուրանալ ըէակցիոնի գոյութիւնը. արտասահմանի հայութիւնը և նոյն իսկ Թիւրքիոյ հայութիւնը պէտք է գիտնան, որ պոլսական մամուլը սովորած է ներքին կացութիւնը իր մերկութեամբ չպատկերելու. գաւառէն եկած ու հոս գոյութիւն ունեցող սև լուրեր լռութեան մէջ թաղուած կը մնան։

Պիտի զարմանաք, երբ ըսեմ... Այն օրը, որ պատրիարք Դուրեան հանդիսականօրէն կը խոստանար վերադառնալ իր պատրիարքական պաշտօնին, մինչդեռ ատեն նոր մարտիրոսացած Ադանայի մէջ կրկին ջարդ մը բռնկելու վրայ էր. ահա թէ ինչպէս։ Տէրութեանց հիւպատոսները կը թելադրէին, որ ջարդուած հայ ցեղի մեծամեծներն ու եկեղեցականները հաշտութեան սեղանով մը գոցեն Ադանայի աղէտալի գիրքը և ըստ նոր վարչութեան ներում շնորհուի ոճրագործ թիւրք յանցաւորներուն. դիմադրութիւնը բնական էր. ատեղիտալի կը մնայ աններողամիտ հայութիւնը, և ահա հայու մը խանութը թիւրք խուժանին յարձակում կը կրէ. մինչ ամեն խանութպան սարսափահար կը գոցեն խանութներն ու կապաւորներն Յիսուսեանց հաստատութեանց մէջ. թիւրքը հայոց դիմադրութիւնը՝ այդ ցոյցով կահաբեկէր և հայութիւնը ստիպուած կընդունէր հաշտութեան սեղանը։ Այս լուրը Պոլիս Յիսուսեան ընկերութեան կը հասնի և տեղական մամուլը հրատարակելու իշխանութիւն չունենար։

Պէտք է համոզուիլ, որ Ադանայի մէջ տակաւին թիւրք խուժանը արիւնի, հայ արիւնի ծարաւը կը զգայ. Ադանայի աղէտներու ատեն շրջակայ գիւղաքաղաք Գաբուրբազարը քաջաբար դիմադրելով՝ չջարդուեցաւ. թիւրք խուժանը հինգ օր առաջ դարձեալ անոր վրայ կը խուժէ, սակայն չի յաջողիր, արիւնի ծարաւը չի յագեցներ։ Այս լուրերը կարծեմ թիւրքիոյ խաղաղութիւնը չեն հաւաստեր... Ու կը լսուին այս լուրերը այն օրը, երբ Հակկը փաշա կը խոստանայ, որ Ադանայի աղէտներու պատճառ եղողները խստիւ պիտի պատժուին։

Ապագան ահարկու է. անուշ խօսքերով հասարակութիւնը թմրեցնելու չէ. բացի հայէն՝ միւս ամեն ցեղերը զինուած են. կարծեմ սահմանադրութիւնը իրաւունք կուտայ, որ իւրաքանչիւր ոք ինքնապաշտպանութեան համար զէնք մը ունենայ...

*

Սահմանադրութենէն վերջը՝ Կում-Կափուի պատրիարքարանին մէջ հասարակական խնդիրներ կը դիզուին. և ամենէն կարևոր հարցերէն մէկն այն է, թէ արդեօք յեղափոխական ընկերութիւնները գաւառի կրթական գործին միջամտելու են թէ ոչ։

Այս ստոյգ է որ՝ յեղափոխական մարմինները, հիմա, ազգային ամեն գործին մէջ վարչապետի գերիշխանութիւնը ցոյց կուտան. այդ անձնանուէր ծառայութիւնը շատ կարևոր էր այն ատեն, երբ պատրիարքարանը յօժարութիւն կամ ձեռնհասութիւն ցոյց չտար իր պարտքերուն։ Օրմանեանէն վերջը՝ նոր սահմանադրական պատրիարքութիւն մը սկսած է. առ այժմ դիւանագիտութիւնը խելք կը սորվեցնէ, որ ամեն մարդ իր գործով զբաղի. պատրիարքին պարտականութիւնը անկ է լոկ պատրիարքութեան, իսկ կրթականն ալ լոկ կրթասիրական ընկերութեանց, և արդէն պէտք է գովել նոյն իսկ այդ ընկերութեանց գործերը, որոնք անուրանալի են իրենց խանդավառ կեանքին մէջ։ Արարատեան ընկերութիւնը կը գործէ, կաշխատին Դպրոցասիրաց և Հայ Տիկնանց ընկերութիւնները, ամենն ալ նախանձելի անձնանուիրութիւն մը ցոյց կուտան։ Իսկ յեղափոխական գործիչներուն ալ կը մնայ թողուլ ժամկոչները, վարժարանները և ամրապնդել սահմանադրութիւնը և սահմանադրական ընել գաւառի ֆանատիկ թիւրք տարրը...

Ե.

և այն տան տիրոջը, ուր ապաստան էր գտել աւազակը։ Ձերբակալվածները տարվեցին Տփղիս, բայց տանուտէր Վարդանեանը շուտով արձակվեց։

Հօլօ

ՆԱՄԱԿՆԵՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՑ

Պետերբուրգ, 6 փետրվարի

Մարդկային պատմութեան ամեն մի շրջանը, ամեն մի էպօխան ունեցել է իր մինուսները, իր բացասական կողմերը, որոնք ժամանակի ընթացքում փոխվել են պլիւսների։

Այդպէս էլ մեր կեանքի,—չեմ ասում միայն հայերի,—այսօրվայ շրջանը ունի իր որոշ մինուսները, ուրոշ բացասական կողմերը, որոնք այսպէս թէ այնպէս գրաւում են և չեն կարող չը գրաւել մեր ուշադրութիւնը։

Դա է մատաղ սերունդի հիասթափութիւնը և նրա ինքնասպանութեան դէպքերի հսկայական աճումը։

Նոր սերունդը, ապագայ այդ մարդկութիւնը, որ պէտք է կրթվէր և դաստիարակվէր այնպէս, որ կարողանար հասկանալ կեանքի գեղեցկութիւնը և այդ գեղեցկութեան մէջ նրա քաղցրութիւնը, այդ նոր սերունդը, շնորհիւ ներկայ իրերի, հիասթափվում է ամեն ինչում և վերջին հրաժեշտ տալիս բոլորին։

Այս միանգամայն ցաւալի երևոյթը, ինչպէս ասացի, գրաւել է մեր հասարակութեան լաւագոյն ոյժերի ուշադրութիւնը, առիթ տալով նրանց լուրջ կերպով խորհելու և մտածելու, դրա դէմ մաքառելու համար։

Ինչումն են կայանում դրա պատճառները, ընթերցող...

Ահա թէ ինչպէս է բնորոշում դրանց՝ այստեղ որոշ դիրք ունեցող բժիշկ Գ. Ի. Գօրդօնը, իր՝ մօտ անցեալում կարդացած զեկուցման մէջ.

«Մեր նոր կրթվող սերունդը, որին չենք կարող չը սիրել, որի զարգացման և հասունութեան համար զոհում ենք և մեր աշխատանքների որոշ տոկոսները, ինքնասպանութիւն է գործում հետևեալ պատճառներից. 1) քննութիւնների և 2) թւանշանների սիստեմից, 3) դպրոցական ընդհանուր չինօվնիկական բնաւորութիւն կրելուց, 4) ուսուցիչների նիւթական անապահովութիւնից և 5) ծնողների բռնած դիրքից։ Քննութիւնները և թւանշանները,—ասում է յարգելի բժիշկը,—չեն կարողանում ծառայել իրանց կոչմանը, որովհետև դրանք լոկ վիճակախաղային բնաւորութիւն են կրում։ Մի աշակերտ, որ տարվայ ընթացքում չէ հետևել լուրջ կերպով, քննութեան օրը կամ ամսական հարցաքննութիւններին պատահմամբ, կոտ վիճակախաղային դիպուածքով, ընկնում է մի այնպիսի տոմս, կամ հարց, որին բարեբաղդաբար լաւ է պատասխանում և ստանում է լաւ թւանշան։ Միւս կողմից՝ մի այլ աշակերտ, որ անքուն գիշերներ է անցկացրել դասերը սերտելու, գալիս է միևնոյն օրը և կտրվում, չէ պատասխանում ըստ կարգին, որովհետև ամբողջ գիշերները չէ քնել, ֆօրմուլաները գլխի մէջ հաւաքելով անգոյն զանգուածք է կազմվել և վախենալով վատ թւանշանից շփոթվում, դողում է, հոգեկան որոշ յուզմունքներ է ստանում և իրան միանգամայն կորցնում։ Այսպիսիները ստանալով վատ թւանշաններ և քննութեան մէջ կտրվելով չեն կարողանում երկուներով վերադառնալ տուն և լսել ծնողների նախատինքներն ու վճռում են վերջ տալ իրանց՝ նոյնիսկ տուն չը հասած։ Միւս կողմից, մեր դպրոցական կազմը, իր աննորմալութեան պատճառով, փոխանակ դէպի գիտութիւնները սէր զարթեցնելու, նրանց մէջ զարգացնում է լաւ թւանշանների սէրը և ծարաւը։ Այսպիսով մենք, ամեն տարի, արձակում ենք գեղեցիկ թւանշաններով գիմնազիաւարտներ, սակայն սակաւ գիտութեամբ։ Պարզ է ուրեմն, թէ ինչպէս թւանշանների և քննութիւնների սիստեմը անկարող է չափելու աշակերտի գիտութեան աստիճանը և թէ որքան վնասակար հետևանքների է հասցընում նրան։

«Երկար կանգ չառնելով մեր դպրոցների, միջին թէ բարձր, չինօվնիկական բնաւորութիւն կրելու մասին, որովհետև դա մեզանից իւրաքանչիւրին շատ պարզ է, կանգնեմ ուսուցիչների նիւթական անապահովութեան խնդրին։ Ո՞վ կարող է դրժել, որ մարդուս հոգեկան դրութիւնը կախված է նիւթականից. երբ ուսուցիչը տեսնում է, որ ամիսը վերջանալով ինքը հնարաւորութիւն չունի տան վարձը կամ տալու այլ պարտքերի առաջն առնելու, նա ջղայնացած մտնում է դպրոց և դասի ժամանակ երբ նոյնիսկ ամենասիրելի աշակերտը սխալվում է կամ չէ կարողանում ուսուցչի (այս դէպքում արդէն) կապրիզներին բաւարարութիւն տալ, նա զայրանում է, պատժում և վատ թւանշանով բաւարարեցնում իր «ВЫХОДКА»-ներին։ Այստեղից պարզ է, որ աշակերտը հիասթափվում է, նրա հոգեկան աշխարհում կատարվում է որոշ կռիւ, ատելութիւն. և այս բոլորը շատ յաճախ հասցնում է նրան այն տրագիզմին, որի քննութեան համար այսօր մենք հաւաքվել ենք այս դահլիճում։ Ծնողներն էլ կարծեմ թէ ձեռք-ձեռքի տուած ուսումնարանական իշխանաւորների հետ՝ պահանջում են նոյն դիսցիպլինան, նոյն լաւ թւանշանները, նոյն աչող քննութիւնը, և այսպիսով մանուկ հասակում պատանին գտնում է իրան շրջապատված թշնամիներով և ինքնասպանութեամբ ազատում է իրան դրանց ներկայութիւնից։ Ֆրանսիական յայտնի մանկավարժ Լիւ-Պրօ-Անը ասում է, որ մեր դպրոցների աննորմալութիւնը կայանում է էլի նրանում, որ ծրագիրը չափազանց էնցիկլօպետիկ է։ Այդքան առարկաներին չը դիմացող մատաղ ուղեղը, լարված՝ պարապմունքներից, շատ շուտով բթանում է, յիշողութիւնը կորչում, առաջ է գալիս մտաւոր քաօս, որի լաբիրինթում չէ կարողանում որոշել իր դիրքը և դերը, ընկնում է մելանխօլիզմի մէջ և վերջ տալիս իրան ինքնասպանութեամբ։ Ուրեմն այդ սոսկալի երևոյթների դէմ առնելու համար անհրաժեշտ է, որ մեր միջին դպրոցների ծրագիրը կրճատենք, և դուրս վտարենք այն բոլոր խլամը, որոնք կեանքում ոչինչ դրական դեր չեն կատարում և աւելորդ չարչարանքների պատճառ են դառնում։ Լիւ-Պրօ-Անը ասում է, թէ պէտք է սովորեցնել այն, ինչ վաղը հարկաւոր է նրան կեանքի հէնց առաջին քայլափոխում։

«Անցնելով թւերին, որ կազմել եմ իմ սեփական հետազօտութեամբ, պէտք է ասեմ, որ իւրաքանչիւր 100,000 աշակերտից ինքնասպանութիւն են գործել 1904 թւին 20 հոգի կամ $6,_2{}^0/_0$, 1905-ին 44 հ. կամ $13,_8{}^0/_0$, 1906-ին 71 հ. կամ $19,_4{}^0/_0$, 1907-ին 112 հ. կամ $29,_4{}^0/_0$ և 1908 թւին 132 հ. կամ $32_2{}^0/_0$. մինչդեռ Գերմանիայում պրօֆ. Հէյլենբուրգի և պրօֆ. Հերհարդի կազմած թւերի համաձայն՝ ինքնասպանների թիւը 2 և նոյնիսկ 3 անգամ սակաւ է։ Այսպէս, օրինակ՝ 1904 թւին—$4,_2{}^0/_0$, 1905-ին—$8,_1{}^0/_0$, 1906-ին—$7,_7{}^0/_0$, 1907-ին—$9,_1{}^0/_0$, 1908-ին—$12,_4{}^0/_0$։ Ընդամենը միջին թւով $8,_3{}^0/_0$, իսկ մեզ մօտ—$20,_2{}^0/_0$։ Եթէ սրան աւելացնենք և այն՝ 1) որ Ռուսաստանում, ես, 5 տարվայ ընթացքում, կարող էի, այս կամ այն պատճառներից, բաց թողնել մի քանի դէպքեր, 2) որ դպրոցական վարչութիւնը կամ ծնողների կօմիտէտը ոչ բոլոր դէպքերն են հրապարակ հանում և 3) որ թերթերից շատերն էլ նոյն դէպքերը ուրիշ պատճառների տակ են յայտարարում,—ձեզ համար պէտք է պարզ լինի, թէ մէջ բերված թւերը որքան սակաւ են դժբաղդութեան իսկական երևոյթը պարզելու համար»։

Ի վերջոյ Գ. Գօրդօնը առաջարկում է Պետերբուրգի ժողովրդական առողջութիւն պահպանող ընկերութեանը՝ կազմակերպել մանկավարժների մի որոշ կօմիսսիա, նոր սերնդի ինքնասպանութեան դէմ կռւելու համար այնպէս, ինչպէս արբեցողութեան դէմ կռւող կօմիսսիան է։

Աննորմալ են մեր դպրոցները, սովորող սերունդը ինքնասպանութիւն է գործում... Աննօրմալ են մեր ամբողջ կեանքի պայմանները, և շարունակ կարդում ենք թերթերում քաղաքացիների նոյն ինքնասպանութիւնների դէպքերի մասին։

Ե՞րբ կը դառնան այդ բոլոր պայմանները նորմալ..., որ մենք էլ կարողանանք շնչել ազատ և մաքուր օդ... Կը գա՞յ արդեօք այդ օրը...

Այո, կը գայ...

Ես հաւատում եմ...

Մ. Աղեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ *)

(Հեռագրով)

Պետերբուրգ, 15 փետրվարի

Նախագահում է Խոմեակովը։

Շարունակվում են ևևմտի ընդհանուր վիճաբանութիւնները։ Մինիստրների օթեակումն է ֆինանսների մինիստրը։

Մեազկին գտնում է, որ ևևմտով յատկացված գումարների մեծ մասը գնում է ոչ թէ ժողովրդական կարիքների համար, այլ անարտադրիչ ծախքերի վրա։ «Բիւջէի քառորդը յատկացվում է պետութեան պաշտպանութեան համար, բայց չը նայած դրան մենք անզօր ենք վէճեր ունենալ նոյն իսկ փոքրիկ պետութիւնների հետ։ Կենսաթոշակների 107 միլիոնից 10-ը յատկացվում է պատերազմում ընկածներին և նրանց ընտանիքներին, իսկ մնացածը «չինօվնիկների» բանակին. 36 միլիօն տրվում է հոգևորականութեանը, որ շարունակում է ապրել գիւղացիութեան հաշւին։ Ժողովրդական կրթութեան համար յատկացվում է ընդամենը 76 միլիօն, ոստիկանութեան վրա ծախսվում է մօտ 100 միլիօն, և այդ այն ժամանակ, երբ Ռուսաստանը գտնվում է տգիտութեան խաւարի մէջ։ Մեր ահագին արտահանութեան վրա մատնանիշ անելը անհիմն է, որովհետև արտահանութիւնը մեծանում է քաղցած ժողովրդի օրական հացի հաշւին։ Ինչ վերաբերում բերքին, որ հնարաւորութիւն է տուել կազմել անդեֆիցիտ բիւջէ, չէ՞ որ այդ բերքը չէ հանդիսանում կառավարութեան տնտեսական գործունէութեան զարգացման ազդակը։ Ռուս երկրին և ռուսական ֆինանսները,—վերջացնում է հռետօրը,—կարող է ուղիղ ճանապարհի վրա դնել միայն իսկական ժողովրդական ներկայացուցչութիւնը հէնց երկրի օգնութեամբ» (ծափեր ձախից)։

Շինգարևը ասում է, թէ անհրաժեշտ է ընդհանուր վիճաբանութիւնների ժամանակ պարզել երկրի ֆինանսական տնտեսութեան առնչութիւնը պետական կառավարութեան հետ առհասարակ։ Յենվելով ֆինանսների մինիստրի ցուցմունքների վրա, թէ առաջիկայ ծախքերը կարելի է փակել նոր հարկերով, հռետօրն ընդգծում է, որ չափազանց աննշան են ճանապարհորդական բարձրացված տարիֆի եկամուտները։ Այդ եկամուտը 8 միլիօնի տեղ տուեց միայն 3 միլիօն։ Ապա Շինգարևը գտնում է, որ ժողովրդական կրթութեան համար էլ շատ քիչ բան է արված. թէև այդ տարվայ ծախքերն աւելացել են, բայց և այնպէս այդ տեսակէտից Ռուսաստանը բաւականին յետ է մնացել ուրիշ պետութիւններից, ծախսելով միայն ամեն մի հոգու վրա 60 կ.։ Դպրոցական-շինարարական ֆօնդի համար խոստացված վեց միլիօնից կառավարութիւնը նախահաշւի մէջ մտցրել է միայն չորս միլիօն։ Ժողովրդական առողջապահութեան և պետական պաշտպանութեան վրա նոյնպէս չափազանց աննշան գումարներ են գործադրվելու համեմատած արևմտեան պետութիւնների հետ։ Տեղական կուլտուրական նպատակներով գումարայատկացումները, որոնք կազմում են երկրի կենսատու ջիղը, բոլորովին անտես են առնված։ Զեմստվային հաստատութիւնների գոյութեան 40 տարիներում չէ կազմակերպված կանոնաւոր փոխատւութիւն զեմստվային գանձարաններին, և ֆինանսների մինիստրը իր բացատրիչ գրութեան մէջ այդօրինակ վարկի կազմակերպութիւնը անթոյլատրելի է գտնում։ Ռուսաստանի բիւջէն անպայման մեծ է, սակայն աննշան է համեմատած արևմտեան պետութիւնների հետ։ Պետական տնտեսութիւնը տարվում է անսիստեմ։ Անտնտեսաբար է տարվում նաև Ուրալի արքունի գործարանների գործը, որոնք գրաւ են դրված նոյնիսկ մասնաւոր մարդկանց մօտ։ Անտառային վարչութեանը անհրաժեշտ է 68 միլիօն՝ գործը պատշաճ բարձրութեան վրա դնելու համար, իսկ նրան բաց են թողնում 400 հազար րուբլի։ Լաւ չեն նմանապէս նաւթային գործը, արքունական մատակարարութիւնները և կապալները, ծովային ու զինւորական գործը։ Փոխառութիւն կնքվեց նաւեր կառուցանելու համար, վճարվում են տոկոսները, իսկ փողերը ընկած են այնպէս, որովհետև գործարանները կարգաւորված չեն։

«Չէ կարելի առանց յուզմունքի խօսել մեր բոլորի սրտին մօտ պետական պաշտպանութեան հարցերի մասին (ծափեր., «բրաւօ») գուցէ կան մի քանի բարելաւումներ, բայց դրանք էլ կատարվում են չափազանց սահմանափակ կերպով։ Զինագործութիւնը չէ պակասել, քննութիւնները կատարվում են ամենուրեք, բայց վախճանը մենք չենք տեսնում, հետևանքները քիչ են, որովհետև կառավարութիւնը, նշանակելով վերաքննութիւն, միևնոյն ժամանակ ինքը բողոքում է անկախ կօնտրօլի դէմ» (ծափեր ծախից, մասամբ կենտրօնում)։ Անցնելով բերրիութեան, հռետօրը գտնում է, որ այդ գործը ունի շատ պակասութիւններ. սեպտեմբերին ծախվեցին ոչ միայն հին հացի պահեստները, այլ և նոր բերքից 100-ից աւելի պուդ։

«Միակ ուրախալի երևոյթ երկրի գիւղատնտեսական կեանքում հանդիսանում է շարունակ աւելացող գիւղատնտեսական գործիքների ներմուծումը Ռուսաստան, բայց այժմ խօսում են արդէն նրանց վրա մաքս դնելու մասին։ Ցաւալի է նաև մեր մշակելի արդիւնաբերութիւնը, որ չէ սպառում արտադրութեան նիւթերը, որովհետև շուկան առաջվայ նման ճնշված է (ծափահարութիւն ձախից), պետական թղթադրամների աճումը անկասկած կայ, սակայն թղթադրամները աճում են միայն պատերազմի և ջարդի ժամանակների հետ զուգընթաց. մենք գնում ենք ուղիղ դէպի հին կարգերը։ Իսկ ինչ վերաբերում է մեր փոխառութեան, որ կնքվեց 87-ով, իսկ այժմ հասել է 97-ի, դա միայն ցոյց է տալիս, թէ ինչ տեսակ անտանելի պայմաններով է նա կնքված. նրա բոլոր օգուտները ի հարկէ ստանում են օտարազգիները»։ Զուգորդելով երկրի տնտեսական կեանքի երևոյթները, Շինգարևը մատնանշում է, որ կառավարութիւնը այդ շրջանում աշխատում է առանց սիստեմների, Դուման չէ աշխատում վերին աստիճանի ծանր պայմաններում, նրա իրաւունքները չեն լայնանում, այլ, ընդհակառակն, նեղվում են։ Այսպէս, օրէնքն ուղղակի ասում է, որ Դումայի քննութեան ենթարկվում են եկամուտը և կօնտրօլը, սակայն կառավարութիւնը հրաժարվում է ներկայացնել հաշիւ (ծափեր ձախից և մասամբ կենտրօնում)։

Դիմելով ընդհանուր քաղաքականութեան, հռետօրը խնդրում է չը թուլացնել Ֆինլանդիային և Լեհաստանին և չը փակել մահմեդական դպրոցները, գտնելով որ միայն Ռուսաստանի բոլոր ժողովուրդների միացեալ սերտ աշխատանքն է, որ հնարաւորութիւն կը տայ Ռուսաստանին ընդարձակվել և բարձրացնել երկրի ֆինանսները։

Վերջացնելով $2^1/_2$ ժամվայ ճառը, Շինգարևը խնդրում է կառավարութեան հնարաւորութիւն տալ հոկտ. 17-ի մանիֆէստին պայծառ ու համարձակ մանել պետական ժողովրդական կեանքը. այն ժամանակ ժողովրդական ներկայացուցչութիւնը կասէ՝ «այո, այս միահամուռ աշխատանք է» (բուռն ծափահարութիւն ձախից և կենտրօնում)։

Նեկրասովը իբրև Սիբիրի ներկայացուցիչ իր ճառը վերջացնում է հետևեալ խօսքերով. «Սիբիրը պատրաստ է կատարել պետական բոլոր պարտականութիւնները, սակայն պահանջում է նոյնպէս համահաւասար իրաւունքներ»։

Ֆինանսների մինիստրը տալիս է բացատրութիւններ և կարծում է, որ ձախակողմեան հռետօրների միակ նպատակն է ոչնչացնել այն նպաստաւոր տպաւորութիւնը, որ ստացվեց բիւջէտային մասնաժողովի նախագահի զեկուցումից (ծափեր աջից)։ (Հ. Գ.)

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Վատացին հեռագրով հարց է տուել կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ռուդօլֆին, թէ երբ է վերադառնալու նա Թիֆլիս։ Հէնց որ հոգաբարձուն վերադառնայ, սենատոր Վատացին նշանակելու է կովկասեան համալսարանի գլխաւոր կօմիտէտի նիստը, ուր վերջնականապէս որոշվելու է ապագայ բարձրագոյն կրթական հաստատութեան տիպը։

◆ Թոքախտի դէմ կռւող Կովկասեան Ընկերութեան վարչութեան վերջին նիստում, մասնակցութեամբ հրաւիրված տեխնիկների և բժիշկների, քննվեց Աբասթումանում թոքախտաւորների սանատօրիա հաստատելու նախագիծը, որ կազմել է տեխնիկ Մարգարեանը։ Սանատօրիայի կառուցումը և կահաւորումը, ճանապարհ, ջրանցք և լուսաւորութիւն հաստատելով, կը նստի 150,000 րուբլի 100 հիւանդների պահպանութեան համար։ Այն հարցին, թէ որքան է հարկաւոր գործը սկսելու համար, որը կարելի է աստիճանաբար ընդարձակել, պարզվեց, որ բաւական է առ այժմ 50 հազար, որպէսզի կարելի լինի կառուցանել սանատօրիայի կենտրօնական շինութիւնը և մի բաժին 30 հիւանդների համար։ Վարչութիւնը հաւանեց նախագծին և վճռեց գարնանից ձեռնարկել աշխատանքներին։

◆ Մեզ հաղորդում են, որ այսօր Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան նիստում ի միջի այլոց քննութեան կենթարկվի առաջիկայ ամարային գործունէութեան ծրագրի մի մասը։ Ընկերութիւնը մտադիր է մի քանի տեղերում կազմել կատարելագործված գործիքների ցոյցեր, օրինակ գութանների, սերմացրիչների, ցաքանների, սերզատների, խնոցների։ Ընկերութիւնը նպատակայարմար է գտել համաձայնութեան մէջ մտնելու Թիֆլիսի Թռչնաբուծական ընկերութեան հետ և իր ծրագրած ցոյցերից մի քանիսը կատարելու Թռչնաբուծական ցուցահանդէսի ժամանակ։ Այսօրվայ նիստում կը զեկուցվեն նոյնպէս տնայնագործական սեկցիայի պարզաբանած խնդիրները։ Նիստը տեղի կունենայ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում։ Սկիզբն է երեկոյեան $7^1/_2$ ժամին։ Կարող են ներկայ լինել նաև կողմնակի անձեր։

◆ Մեզ հաղորդում են, որ Յովնանեան դպրոցի հոգաբարձութիւնը վերջերս լրջօրէն զբաղված է միջոցներ որոնելու՝ դպրոցի եկամուտը հաւասարակշռելու համար։ Յովնանեան դպրոցը զուտ եկամուտ ունի մօտ 20,000 ր., բայց ծախք՝ մօտ 28,000 ր.։ Կամ պէտք է եկամուտն աւելացնել, կամ ծախքերը կրճատել։ Առ այժմ աննհնարին գտնելով ծախքերի կրճատումը, հոգաբարձութիւնը հետամուտ է աւելացնել եկամուտը և այդ նպատակով որոշել է քարվանսարայի վարձոգների վրա յաւելումն կատարել։ Քարվանսարան այժմ տալիս է եկամուտ 22,000 ր., հոգաբարձութիւնը որոշել է հասցնել վարձագինը 25,400 ր., մտնելով փոխադարձ համաձայնութեան մէջ վարձակալների հետ, որոնք, ի նկատի ունենալով դպրոցի շահերը, որոշել են ընդառաջ գնալ հոգաբարձութեան ցանկութեան, միայն խնդրել են մի փոքր զիջողութիւն անել։

◆ Յովնանեան դպրոցի հոգաբարձութիւնը, լսելով ուսուցիչ Մելիք-Մուսեանի խնդրագիրը՝ տալ իրան արձակուրդ ծանր հիւանդութեան պատճառով, որոշեց հրաւիրել նրա տեղ երկու նոր ուսուցիչներ՝ Պ. Տէգրանեանին և Կ. Տէր-Մկրտչեանին, բաժանել այս երկուսի մէջ Մելիք-Մուսեանի 26 դասերը, իսկ սրան տալ խնդրված արձակուրդը։

◆ Այսօր, հինգշաբթի, կանանց բարձրագոյն կուրսերի խորհրդի նիստում պրօֆ. Կ. Ծարինցով և ուսուցիչ Գ. Բարաչ կը կարդան զեկուցումներ իրանց ճանապարհորդութեան մասին դէպի Մօսկվա՝ մասնակցելու XII համագումարին։ Սկիզբն է երեկոյեան ժամը 7-ին։ Նոյն տեղում երեկոյեան ժամը 9-ին տեղի կունենայ խորհրդակցութիւն ընտրելու մի յատուկ մարմին, որ իր վրա վերցնի բնագէտների XIII համագումարի կազմակերպութիւնը։

◆ Ինչպէս յայտնի է, ժողովրդական համալսարանի վարչութիւնը երկու տարի առաջ կազմակերպել էր դասախօսութիւններ հայերէն և վրացերէն լեզուներով, սակայն նա զրկվեց այդ իրաւունքից։ Այժմ վարչութիւնը որոշել է միջնորդութիւն յարուցանել Փոխարքայի առաջ՝ նորից թոյլ տալու տեղական լեզուներով դասախօսութիւններ կարդալը և կազմել է մի պատգամաւորութիւն, բաղկացած Ի. Ըցխելաձէից, տիկ. Բօխլենայից և Հ. Առաքելեանից՝ ներկայանալու Փոխարքային։

◆ Արդահանի շրջանային պետը դիմելով Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեանը՝ խնդրում է մատնացոյց անել, թէ եւրոպական ո՞ր տեսակի ցուլերը կարող են պիտանի և արդիւնաբեր լինել կաթնատու կովերի մի նախիր կազմելու համար։ Ընկերութիւնն իր կողմից դիմել է մասնագէտ անդամներին և խնդրել տեղեկութիւններ յարուցված հարցի մասին։

◆ Մեզ հաղորդում են, որ այս տարի տեղի կունենան Անդրկովկասում բամբակագործութեան համագումարներ՝ քննելու այդ արդիւնաբերութեան ընթացիկ կարիքները և մշակելու միջոցներ այդ կարիքներին բաւարարութիւն տալու։ Ենթադրվում է, որ համագումարները կը լինեն Երևանում և Գանձակի նահանգի բամբակագործական շրջաններից մէկում։

◆ Ստացանք «Լումայ» ամսագրի յունվարի համարը, որի մէջ կայ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի յօդուածի շարունակութիւնը հայոց կաթողիկոսների մասին։

◆ Թիֆլիսի ռէալական դպրոցի նոր շէնք կառուցանելու համար կազմված է մի նախագիծ, որի համաձայն կառուցումը նստելու է 200 հազար րուբլի։ Նախագիծն այս օրերս կուղարկվի ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան հաստատմանը։

◆ Երկաթուղային նախկին մեքենավար Բազվօզովսկին հնարել է նոր տեսակի էլեքտրական արգելիչ շղթայ (тормоз), որ վայրկենապէս կանգնեցնելու է էլեքտրաքարշի վագօնը։

◆ Այսօր նշանակված են քաղաքային դումայական վերստուգիչ, տնտեսական և անտառային մասնաժողովների նիստերը՝ ամեն մինը իրան նախագահ ընտրելու համար։

◆ Այսօր տեղի կունենայ ձայնաւորների մասնաւոր նիստը գնահատման մասնաժողովի համար թեկնածուներ մատնանշելու։

◆ Կիրակի օրը Զուբալովեան ժողովրդական տանը Երմօլայեվը կը կարդայ հանգուցեալ դերասանուհի Կօմիսսարժէվսկայայի կենսագրութիւնը, որից յետոյ կը կատարվի հոգեհանգիստ։

◆ Վաղը Թիֆլիսի նահանգական դատարանի շինութեան մէջ տեղի կունենայ կովկասեան իրաւաբանների ընկերութեան հերթական նիստը։

◆ Փետրվ. 15-ին կայացաւ Վրաց Դրամատիկական Ընկ. նորընտիր վարչութեան անդամների նիստը, ուր նախագահ ընտրվեց Քարթվէլօվ, նախագահի օգնական՝ Սարաջէվ, գանձապահ՝ Շիխինօվ և քարտուղար՝ Նացուլիշվիլի։ Միաձայն ընտրված իշխ. Էրիստօվ հրաժարվեց վարչութեան անդամութիւնից, որի տեղ մտաւ Շիխինօվը։ Այս նիստին որոշվեց առաջարկել հին կազմին ներկայացնել բոլոր հաշիւները մինչև մարտի 14-ը։

◆ Թոքախտի դէմ կռւող Կովկասեան Ընկերութիւնը՝ Աբասթումանում շինվելիք սանատօրիայի համար ստացել է նուէր.—Լ. Քեահեանեանից 5 ր., Ա. Բաբանեանից 45 ր., Վ. Տօվեանեանից 15 ր., Ն. Կուզբեկովչից 15 րուբլի, Կ. Սարգսեանից 45 ր., Գ. Շահբուդաղեանից 6 ր., բժիշկ Կամաեվից 30 ր., Մն. Խունունցից 25 ր., Մ. Դօլուխանեանից 100 ր., տ. Ե. Մելիք-Ղարագեօզեանից 5 ր., Յ. Նակաշիձէից 15 ր., Ս. Գլասսկից 10 ր., բժ. Գօպաձէից 15 ր., Լ. Մղերեանից 15 ր. Մինչև օրս ստացուած է փողով և ծախված քարերից 533 րուբլի։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

16 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. [illegible] երկրորդ կէսի[illegible] Թօլստոյին է Գրօդնոյում զանազան Թերթերի [illegible] հեղինակների համաձայնումը։

Պետական պաշտպանութեան մասնաժողովը զինուորական մինիստրութեան [illegible] նախահաշիւը [illegible] որոշումները. 1) զինուորական [illegible] ձեռք է առնելու [illegible] միջոցներ [illegible]. 2) [illegible]. 3) փողով հոգալու է ձեռք բերել [illegible] պատրաստված են պատերազմի ժամանակ. 4) [illegible].

Պետական [illegible] Մարտինսոնը, որ [illegible] 111,831 րուբլի [illegible]։

Փինանսական [illegible] 50 միլիոն 5%-ով [illegible] 5%-ն [illegible] 25 միլիոն րուբլի։

Կանանց պաշտպանութեան [illegible] ընկերութիւնը փետրվարի 21-ին Պետերբուր-

---

*) Տես «Մշակ» № 36.

գում գումարում է կանանց վաճառքի դէմ կռւելու համառուսական համագումար:

ԿԻԵՎ: Զինուորական-դատարանի քննիչի կարգադրութեամբ գիշերս կալանաւորվեցին ինտենդանտական վեց պաշտօնեաներ:

ՊՕԼՏԱՎԱ: Եկաւ զինուորական մինիստրը:

ՌՕՍՏՕՎ Դ/Վ.: Վլադիկավկազեան երկաթուղիների վարչութիւնը անտոմսակ ճանապարհորդներ տանել-բերելու առաջն առնելու նպատակով վերստին աւելացրեց կօնդուկտօրների ռոճիկները և յատկացրեց 45,000 րուբլի օրինակելի կօնդուկտօրներին վարձատրելու համար:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային:

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԷԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.

Ց. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—ատամնաբոյժ—8½—11½ ժ., պլօմբներ և արհեստական ատամներ:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԷԼ—6—6½ ժ մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

103. 0—18

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ:

Ընդունելութիւնը

ամեն օր (առաւօտեան ժ. 12½—2.
(երեկոյեան ժ. 5—7.

Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—12½.

Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.

(օ. մ.) 1044. 100—79

ԲԺՇԿԱՊԵՏ

ԱՒԵՏ. ԲԱԲԱՅԵԱՆԸ

Մնալով այս ձմեռ Թիֆլիսում, ընդունում է ներքին եւ ջղային հիւանդներ:

Ցերեկվայ 1—3 ժ., երեկոյեան 6—7 ժ.
Լերմօնտօվսկայա փողոց տուն 21, բն. № 2.
Տէլէֆօն № 221.

(օ. մ.) 1213. 35—32

ԲԺԻՇԿ

Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների: Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը:

Կսէնիևսկայա փ., № 6, «Վէտցէլ» հիւրանոցի մօտ: (Ե. Հ. Շ.) 955. 100—60

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ:

Ընդունելութիւն ամեն օր { 5—7 ժ. երեկ.

Միքայէլեան փող., № 36. Տէլէֆօն № 388

(օ. մ.) 1216. 100—72

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ

Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վէլեամինօվսկայա փող № 8

(օ. մ.) 783. 100—84

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ

ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժիշկների յանձնմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (втирапіе) և այլն: Ելեկտրականութիւն բէվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ: Մասսաժ էլեքտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ: Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն: Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների: Խորհուրդը 50 կոպ.: Ընդունելութիւնը՝ կանանց—3—3½ ժ., տղամարդանց—3½—4½ ժ.: Семеновская ул., № 9.

(Կ. Հ.) 77. 50—9

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

Զուբալօվի անուան

Կիրակի, փետրվ. 21-ին ՄԱԿԱՐ ՋՄՇԿԵԱՆԸ կը կարդայ դասախօսութիւն հայերէն լեզուով—աստղալից երկնքի և առաջիկայում երևացող Հալլէի գիսաւորի և նրա երկրիս հետ բնդհարվելու հետեւանքի մասին ըստ վերջին գիտական տեղեկութիւնների: Դասախօսութեան ընթացքում ցոյց կը տրվեն բացատրական պատկերներ մոգական լապտերներով: Սկիզբը երեկ. 5½ ժամին:

Մուտքի վճարը 10—50 կոպէկ:

(Հ. Շ. Կ.) 207. 3—1

XXVIII ՏԱՐԻ **ԱՂԲԻՒՐ** ԵՒ **ՏԱՐԱԶ** XXI ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ

Հրատարակվում են նոր, բազմաբովանդակ, մասնակցութեամբ մեր եւ եւրոպական ականյայտնի գրականագէտների, հրապարակախօսների, յուզորդների, արուեստագէտների եւ գեղագէտների:

Դպրոցների, հաստատութիւնների, գրադարանների եւ հասակաւոր բաժանորդների համար՝ տարեկան 10 ր.: Արտասահման 18 ր. կամ 50 ֆր., իսկ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ունեցող ընտանիքներին ՀԻՆԳ ր.: Ներկայ 1910 թ. ընթացքում բաժանորդները ստանում են.

1) ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագիրը, 2) ՏԱՐԱԶ պատկերազարդ հանդէսը, 3) ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔԸ, 4) ԱՌՈՂՋԱՊԱՀ, 5) ԳԵՂԱՓՆՋԻԿ, 6) ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ Սանահնի վանքի դարաւոր հոյակապ սրբազան կամարների տակ, 7) Ս. ՍԱՀԱԿ, 8) Ս. ՄԵՍՐՈՊ, 9) ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, 10) ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ուղեւորութիւնը, 11) Ս. ԷՋՄԻԱՆ ՏԱՃԱՐԻ գեղանկարը 18-րդ դարի վերջերում, 12) ԴԵՂԱՆԻ ՕՐԱՑՈՅՑ 1911 թ., 13) ՄԱՆԿԱՆՈՑՈՒՄ պիէս, 14) ՉԱՐԱՃՃԻ ԱՐՄՈՒՇԻԿԻ ճանապարհորդութիւններն ու արկածները, 15) ՀԱՅՐԵՆԻՔ ՍՐԲԱԶԱՆ, տեղագրական, 16) 1910 թ. ապրիլի 23-ին ԱՂԲԻՒՐԻ եւ ՏԱՐԱԶԻ 1900 թ. 5000 ԲԱԺԱՆՈՐԴ. (№ №)-երի մէջ վիճակ գցվող 500 առարկաների 2 տոմս:

ՎԻՃԱԿ ԵՆ ԳՑՎԵԼՈՒ

արձաններ, գրքեր, պատկերներ, դպրոցական առարկաներ, սեղանի ընտիր կարգեր, ալբոմներ՝ պօստ-կարտերի եւ լուսանկարների համար, ժամացոյցներ՝ ծոցի, սեղանի վրա դնելու, պատի օրացոյցի համար ընտիր բելէֆ եւ փառահեղ կարտօններ, գրասեղանի զարդեր, օդագնացի մօդելներ եւ այլն, եւ այլն:

Այդ առարկաները անցած դեկտեմբերի մէկից Դրական-Գեղագիտական Սալօնում դրված էին ի ցոյց 1910 թ. բաժանորդագրվողների:

Վիճակահանութեան մասնակցում են անխտիր բոլոր բաժանորդները:

„Աղբիւր“ եւ „Տարազ“ միեւնոյն հասցէով ստացող բաժանորդներին տրվում է 2 № №, որոնք անուանական են (տպված հասցէները): Վիճակին մասնակցելու համար բաժանորդը չը պէտք է աւելորդ վճար անէ. վիճակահանութիւնը բոլորովին ՁՐԻ է:

ԱՊԱՌԻԿ կամ ՄԱՍ-ՄԱՍ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ: Հասցէն՝ Тифлисъ, Редакція „АГБЮР-ТАРАЗ“.
Tiflis, Caucase, Direction „Agbur-Taraz.“

(Շ. Ե. Հ.) 124. 10—7

ԿՈՐՉԵՆ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԸ!!

էժան է եւ գործնական!! 10 ռուբ. փոխարէն միայն 3 r. 15 կոպէկով

ուղարկում ենք վերադիր վճ. և առանց կանխավճ. չքեղ և ամուր՝ աղամ. համար գրպանի բաց ժամացոյց, ամերիկ. խոկական նոր ոսկուց՝ «Prima» (չուկեզօծված), հրաշալի գրաւիրով, լարումը կոթից՝ 36 ժ. մի անգամ՝ երաշխաւոր. ուղիղ ընթացքի համար 6 տ.: Այդ ժամաց. նոյնիսկ փորձված մասնագէտը չէ կարող զանազանել 56 յարգի խակ. ոսկուց՝ 50 ր. արժողութեան: 2 հատը՝ 5 ր. 50 կ.: Կանացի ժամաց. 4 ր.: Այդ ձևի խուլ ժամաց. երեք փականներով «Prima-Vatch», պարզեատրված, 6 ռուբ., 2 հատը՝ 11 ր. 40 կ.: Կանացին՝ 7 ր.: Իւրաքանչ. ժամաց. ձրիաբար կցում ենք. 1) Նոյն ոսկուց շղթայ, 2) 84 յարգի արծաթեայ բրէլօկ, ոսկեզօծված, գեղեցիկ գրաւիրով, 3) պահէսայ քսակ ժամաց. փչանալուց պահպանելու համար: Հասցէն՝ Варшава. М. Складъ часовъ Т-ВА «АПОЛЛО». 1-ое почт. отдѣленіе.

Ճանապարհածախս հաշվում է 1—4 ժամաց. համար 50 կ., իսկ Սիբիր 75 կ.: Սիբիր առանց կանխավճ. չէ ուղարկվում: Թղթակցութիւնները ռուսերէն կամ գերմաներէն: (Հ.) (В.13528) 195. 2—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ

ՅՈՎՍԷՓ ՄԵԼԻՔ-ՋՀԱՆԵԱՆՑԻ

Тифлисъ, Лермонтовская ул., № 4 (близъ III мужск. гимназіи)

Ընդունում են աշակերտներ գիշերօթիկ և երթևեկ և պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար:

Աւանդվում են՝ ռուս, հայ, գերման, լատին, և ֆրանսիական լեզուներ:

(Ե.Հ.Կ.) 117. 20—9

---

2 ԶԳԵՍՏ 5 ր. 25 կ.

Տարածելու նպատակով՝ մենք ուղարկում ենք 12 ր. փոխարէն 5 ր. 25 կոպէկով հետևեալ զգեստացու 2 կտորները. 1) 4¼ արշ. ֆրանս. տրիկօ տղամ զգեստի համար, շատ ամուր, գործնական և մօդային նկարներով բրդէ կտոր: 2) 8 արշ. կտոր «Անգլէյ», կանանց ամբողջ զգեստի համար, միանգամայն մօդային և գեղեցիկ բրդէ կտոր: Այդպիսի 2 կտոր լաւ տեսակից՝ ուղարկում ենք 5 ր. 75 կոպէկով: Ճանապարհածախսը 55 կոպ.: Երկու և աւելի զոյգ կտոր բերել տալուց՝ ճանապարհածախսը մեր հաշւին: Ուղարկում ենք պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ. և երաշխաւորութեամբ—եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում: Պահանջները հասցէագրել. г. Лодзь, въ фабрику Т-ва „Э Х О“.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(Շ. Ե. Հ.) (В. 2831) 46. 17—12

ԱՆՀԱՒԱՏԱԼԻ Է, ՍԱԿԱՅՆ ՓԱՍՏ Է

7 r. 25 կոպէկով 2 զգեստացու. ուղարկում եմ փաթեթած և ճանապարհածախսով միասին, պօստով, վերադիր վճ. 4¼ արշ. երկար., տղամարդկ. հագուստի համար, ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲՐԴԷ ՏՐԻԿՕ, 2 արշ. լայն., նորագոյն ամուր գործուածք, հարթ կամ նոր-մօդային նկարներով՝ բոլոր մութ գոյների, և 8 արշ. «Նօվէտէ» կտոր, կանանց զգեստացու, մօդային վանդականման նկարներով կամ շերտավոր:

Երկու զոյգ կտոր պատուիրելուց՝ ձրի կցում եմ թէ տղամարդկանց և թէ կանանց կտորներին հարկաւոր աստառացու: Ըստ ցանկութեան՝ բոլոր կտորները կարելի է ուղարկել սոսկ միայն տղամ. կամ կանանց համար: Առանց բիսկի. չը հաւանված ապրանքի համար փողը լրիւ վերադարձնում եմ:

Վերադիր վճ. համար հաշվում է իւրաքանչիւր րուբլուն 2 կոպ., իսկ Սիբիր՝ կշռի տարբերութեան համաձայն՝ 2 զգեստացուի համար 85 կ., 4 զգեստացուի համար 1 ր. 25 կ.: Հասցէագրէք՝ фирмѣ М. А. БАБУШКИНА, ЛОДЗЬ. 1-е отд. М.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(18, 25) (В.11220) 159. 3—2

---

7 ՌՈՒԲ. 25 ԿՈՊԷԿՈՎ

ԵՐԿՈՒ ԶԳԵՍՏԱՑՈՒ!

Տղամարդու եւ կնոջ

Ձմերային կամ աշնանային զգեստի երկու կտոր՝ տղամարդկանց և կանանց՝ ուղարկվում է պօստով, առանց ճանապարհածախսի—7 ր. 25 կոպէկով: (Սիբիր հաշվում է 85 կ.): Եթէ դուր չը գայ—ֆաբրիկան փողը վերադարձնում է: Տղամ. կտորը 4¼ արշ. անգլ. տրիկօ է, ամուր, բրդից, 2 արշ. լայնութեան, նորագոյն նկարներով, իսկ կան. կտորը 8 արշ. տրիկօ «ՖԼՕՐԻԴԱ», բրդից, մօդային նկարներով եւ էլեգանտ: Երկու կտորներն էլ ամեն տեսակ մութ գոյների: Վերադիր վճ. ուղարկվելուց հաշվում է 14 կ. յաւելումն (պօստային սակագին): Չորս եւ աւելի կտոր բերել տալուց՝ տղամ. իւրաքանչիւր կտորին կցվում է աստառացու, իսկ կանանց իւրաքանչիւր կտորին՝ կաշւէ գօտի-միանգամայն ձրի: Հասցէագրել. Экспедиціонный Домъ БЕРНШТЕЙНЪ и КОМ. Бѣлостокъ. И.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(18, 20) (В. 10677) 138. 4—3

Տպագրվում է և շուտով լոյս կը տեսնի
ԼԷՕՆԻԴ ԱՆԴՐԷԵՎԻ վերջին յայտնի գործը

„ԱՆԱԹԷՄԱ“

Պատուէրների համար այժմեանից դիմել՝ Тифлисъ, Тумановскій пер. № 23, Налбандяну.

(Ե. Հ. Կ.) 192. 4—2

Լոյս տեսաւ
Տիկ. Վ. ԴԱԴԵԱՆԻ

„ԲԱՐԻ Է ՍՈՒՐԻԿԸ“

մանկական պիէս 2 գործող.

Պահեստը իր մօտ: Գինը 15 կ.:

Հասցէ՝ Верхніе-Акулисы, Араму Дадіанъ.

Գումարով գնողներին 50 հատին 10%, 100-ին 15% զեղչ:

(Ե. Հ.) 194. 2—2

ԻՆՉ ԲԱՆ Է «ՏՈՒՐԻՆ» ՇԷՎԻՕՏԸ

Տղամարդ. հագուստեղ. շրջանում նորութիւն է «Շէվիօտ Տուրինը»: Այնպիսի մի էժան գնով՝ ինչպիսին է 3 ր. 30 կ., լաւ տեսակինը՝ 3 ր. 95 կ.—ամբողջ 4¼ արշ. կտորի համար, իբրև տղամ. լրիւ զգեստացու կտորը ոչնչով չէ զանազանվում արշ. 3—4 ր. արժեցողից և ունի վերջինիս բոլոր յատկութիւնները, այն է՝ բարձր տեսակի ամրութիւն, գործնականութիւն և էլեգանտ.: Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն: Ուղարկ. եմ վերադիր վճ., պօստով, առանց կանխավճ.: Երեք և աւելի կտոր պահանջելուց՝ իւրաքանչիւր կտորին կցվում է հարկաւոր քանակ. աստառացու ձրի: Առանց բիսկի, լրիւ երաշխաւոր.—եթէ չը հաւանվի՝ յետ է ընդունվում: Պահանջները խնդրում եմ հասցէագրել՝ въ фабрику шерстяныхъ издѣлій З. РОЗЕНТАЛЯ, г. Лодзь.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(Շ. Ե. Հ.) (В.2815.) 45. 16—12

---

2 ՌՈՒԲԼՈՎ ՊԻՋԱԿ

Այդպիսի չեղած էժան գնով ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործն. և գեղ. պիջակ՝ տարվայ ամեն սէզօնին յարմար: Նոյնպէս ուղարկ. եմ պատրաստի շալվարներ, կարված մօդային, գործն. և ամուր կտորից՝ 2 ր.: Պիջակի կամ շալվարի ճանապարհած. 35 կ.: 3 և աւելի առարկ. բերել տալուց՝ իմ հաշւին: Ուղարկ. եմ վերադիր վճ., պօստով, առ. կանխավճ., երաշխաւորութեամբ—եթէ չը հաւանվի՝ յետ եմ ընդունում: Պատուէրները հասցէագրել. фабрик. З. Г. РОЗЕНТАЛЮ, г. Лодзь, № 216.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(Ա. Օ.) (В. 2782) 44. 33—23

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ-ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ

Գրադարանը

բաց է՝

Ընկ. անդամների համար առ. 9—2 և եր. 4—8. Գիտութեամբ պարապողների համար առ. ժամը 8½-ից մինչև գիշերվայ 11½ ժամը: Գրադարանը գտնվում է Վելեամինօվսկայա փողոցում, տուն № 14, բն. № 1.

(Կ. Ե. Հ.) 185. 10—3

ԵԱՂԼՈՒ, ԳԱԹԱՅ, ՆԱԶՈՒԿ

Պատրաստվում են ամեն օր:

Կօնդիտերսկի խանութ
Ե. ԽԱՆԴԱՆԵԱՆՑԻ

Արմեանսկի բազար, № 8.

Նոյնպէս՝ պիրօժէնոէ, պեչէնիէ, կալէտ և պաքսիմատ զանազան յատկ., պակասեցված գներով: Ընդունվում են պատուէր՝ եր.

Յարգանքով՝ Ե. ԽԱՆԴԱՆԵԱՆՑ

(Շ. Ե. Հ.) 180. 3—3

Մամուլի տակից դուրս եկաւ և ծախվում է

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԴԷՄ ԿՌՈՒԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Պատկերազարդված 41 նկարներով

Անհրաժեշտ ձեռնարկ այգեգործների եւ պարտիզպանների համար:

ԳԻՆՆ է 35 Կ. (ճանապարհածախսով. կարելի է 7 կոպ. մարկաներով):

Դիմել՝ Тифлисъ, редакція журн. «Гюхатнтесъ».

(Հ. Կ.) 110. 8—6

Ծանուցագիր

ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՏԵԱՆՈՒՄ առաջիկայ մարտի 1-ի ցերեկվայ ժամը 12-ին նշանակված է ԱՃՈՒՐԴ և 4-ի՝ նոյն ժամին ԿՐԿՆԱՃՈՒՐԴ, Ղօշավանքի «Տայլար» կոչված 600 դեսեատին վարելահողերը և արօտատեղերը կապալով տալու համար: Ցանկացողները պայմանների մասին տեղեկանալու համար կարող են դիմել նոյն ատեանին ամեն օր առաւօտեան ժամը 9-ից—2-ը և երեկոյեան 6-ից—9-ը:

Անդամ կառավարութեան՝
Համազասպ քահ. Ղարագէօզեանց
Քարտուղար՝ Ց. Այվազեան

(Ա. Օ.) 202. 4—2

Երեւանի թեմի ծխական դպրոցների տեսչի պաշտօնն ստանձնել ցանկացող անձերը հրաւիրվում են դիմելու Թեմակալ առաջնորդին, ուղարկելով հանգամանօրէն տեղեկութիւններ իրանց ուսման և դպրոցական պաշտօնավարութեան մասին: Թեմական տեսուչը ստանալու է տարեկան 1800 ր. ռոճիկ և առանձին ճանապարհածախս: Պաշտօնավարութեան պայմաններն առհասարակ կարելի է պարզել բանակցելով Թեմ. խորհրդի հետ, որը և կատարելու է Թեմական տեսչի ընտրութիւնը:

Դիմումները հասցէն՝ Эривань, Армянскому Епархіальному Начальнику Архимандриту Хорену Мурадбекіанъ.

(Լ. Կ. Հ.) 162. 3—3

Միայն 2 ր. 75 կ.

ուղարկում եմ պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճ. «ՏՐԻՈՒՄՖ» շէվիօտի մի ամբողջ կտոր՝ 4¼ արշին տղամարդկանց զգեստի համար: Զը նայած ծայրայեղ էժանութեան՝ «Տրիումֆ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի ամենալաւ կտորների յատկութիւնը—միանգամայն ամուր է, գործնական և շքեղ: Գոյները՝ սև, կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն: Ճանապարհածախսը 55 կ.: Երեք և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախսը իմ հաշւին: Պահանջները հասցէագրել. г. Лодзь, № 72 л., фабриканту ЗИГМУНТУ РОЗЕНТАЛЮ

Թղթակցութիւնները ռուսերէն:

(Փ. 18) (В. 2764) 38. 3—3

ԹՂԹԷ ՏՈՊՐԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ „ԶՎԷԶԴԱ“ ընկերութեան

Բարօնսկայա եւ Մեծ-վանքի փող. անկիւն, Թաումեանի տպարանին կից:

Յայտնվում է ի գիտութիւն հասարակութեան, որ վերոյիշեալ գործարանում պատրաստվում են թղթէ տոպրակներ զանազան մեծութեան, ինչպէս հասարակ, նոյնպէս և գունաւոր, ատտառով և ըստ ցանկութեան պատուիրող ֆիրմայի անուան մակագրութեամբ: Տոպրակները պատրաստվում են արտասահմանից ստացված էլեքտրաշարժ մեքենայի միջոցով: Պատուէրներն ընդունվում են շատ ձեռնտու գներով և կատարվում են շուտափոյթ և բարեխղճօրէն: Օտար քաղաքացիներին պատուէրներն ուղարկվում են վերադիր վճարով՝ ստանալով կանխավճար արժէքի առնուազն ¼ մասը:

Նոյն տեղում ընդունվում են և տպարանական ամեն տեսակ պատուէրներ:

Հասցէն (Նամակների համար. Тифлисъ, фабрика бумажныхъ мѣшковъ Т-ва „ЗВѢЗДА“.
(Հեռագիրների համար. Тифлисъ, фабрика „ЗВѢЗДА“.

(Հ. Կ.) 132. 10—5

ՁԵՐ ԲԱԽՏԸ ՓՈՐՁԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԷՔ 2 ՌՈՒԲԼԻ

և դուք իրաւունք կը ստանաք մասնակցելու Պետերբուրգի պետական բանկում 1910 թ. մարտի 1-ին տեղի ունենալիք II փոխառութեան տոմսերի խաղարկութեան $^1/_{50}$ բաժնին: Ծախսելով այդպիսի մի չնչին գումար՝ Դուք կարող էք տանել 4000 ՌՈՒԲԼԻ. հետևաբար, Ձեզ հարկաւոր է օգտվել հանգամանքից և շուտով գրվել իբրև մասնակցող: Ստանալով Ձեր դրած գումարը, իսկոյն եւ եթ Ձեզ կուղարկվի վկայագիր, որի մէջ նշանակված կը լինեն տոմսի համարը եւ սէրիան, որով տարված գումարի վերոյիշեալ բաժինը պատկանում է Ձեզ: Խաղացված տոմսերի աղիւսակը կը հրատարակվի թէ «Մշակի» եւ թէ այլ բոլոր լրագիրներում: Պատուէրները հասցէագրէք՝ Въ Контору Ш. ФРЕНЗЕЛЬ, Варшава, Панская 26. Հեռագիրների համար— ВАРШАВА, ФРЕНЗЕЛЬ, ПАНСКАЯ 26. Վճարը $^1/_{25}$ բաժնի համար 4 ր., $^1/_{20}$-ինը՝ 5 ր., $^1/_{10}$-ինը՝ 10 ր.: Կարելի է գրվել եւ այլ մի քանի տոմսերի համար: Թղթակցութիւնները ռուսերէն:

(16, 18) (В. 11691) 154. 4—4

„ՊՐՕՎՕԴՆԻԿ“

1897 թ.

1888

ՖԱԲՐИЧ. КЛЕЙМО Т-ВА Р.-А. Ф. „ПРОВОДНИКЪ“ РИГА

ПОСТАВЩИКЪ ДВОРА ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

~ՌԻԳԱՅՈՒՄ~

Անդրկովկասեան ֆաբրիկային պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ

ՍՕԼՕԼԱԿՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ № 4

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ

Կառքերի համար բէզինէ շիներ.
Աւտոմօբիլների համար պնէվմատիկ շիներ. «ԱԼՄԱԶ» (կարմիր).
Վելօսիպեդների համար պնէվմատիկ շիներ.
Աւտոմօբիլ-օմնիբուսների համար խիտ-բէզինէ շիներ.

«ՊՐՕՎՕԴՆԻԿ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ արդիւնաբերած շիները երկար տարիների ընթացքում ճանաչված են իբրև առաջնակարգ և բարձր են կանգնած արտասահմանեան ամենալաւ ֆաբրիկաների շիներից, որի համար վկայում է ոչ միայն նրանց վերաբերմամբ եղած խոշոր պահանջը Ռուսաստանի սահմաններում, այլ և ցուցահանդէսների մեծ քանակութեամբ արտահանները:

№ 2 105. 0—8

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.